European Bank
for Reconstruction and Development

Independent
Project
Accountability
Mechanism

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՄԵԽԱՆԻԶՄ

Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում (48579)

ԴԻՄՈՒՄ ԹԻՎ 2020/02

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - 2020թ.-ի նոյեմբեր

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմը (ԾՀԱՄ) ԿԶԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմն է: Այն ստանում և անկախ եղանակով քննում է անհատների կամ կազմակերպությունների կողմից բարձրացված մտահոգությունները Բանկի կողմից ֆինանսավորվող Ծրագրերի վերաբերյալ, որոնք, իրենց կարծիքով, վնաս են պատճառել կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել: Մեխանիզմի նպատակն է նպաստել Ծրագրի շահագրգիռ կողմերի շրջանում սոցիալական, բնապահպանական և հանրային տեղեկատվության հետ կապված խնդիրների լուծմանը, պարզել, թե արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը և Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ ծրագրերին առնչվող դրույթներին, և, եթե կիրառելի է, վերացնել ցանկացած առկա անհապատասխանություն նշված քաղաքաանություններին՝ միաժամանակ կանխելով ապագայում Բանկի կողմից հնարավոր անհամապատասխանության դեպքերը:

ԾՀԱՄ-ն անկախ գործառույթ է, որը կառավարվում է Բանկի ներդրումային գործառնությունների սահմաններից դուրս (այսինքն՝ Բանկի ղեկավարության ենթակայության տակ չէ), և իր՝ Վերահսկիչ հանձնաժողովի միջոցով ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին:

ԾՀԱՄ-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմե՛ք մեզ կամ այցելե՛ք մեր կայքէջը. https://www.ebrd.com/project-finance/ipam.html.

Կոնտակտային տվյալներ.

Հասցե՝

The Independent Project Accountability Mechanism (IPAM)
European Bank for Reconstruction and Development
One Exchange Square
London EC2A 2JN

Հեռ.՝ +44 (0)20 7338 6000
Ֆաքս՝ +44 (0)20 7338 7633
Էլ-փոստ՝ ipam@ebrd.com

https://www.ebrd.com/project-finance/ipam.html

Ինչպե՞ս կարող է ԾՀԱՄ-ը արձագանքել ինձ մտահոգող հարցերին:

ԿԶԵԲ-ի գործունեության բնապահպանական և սոցիալական ասպեկտների, ինչպես նաև թափանցիկության նկատմամբ պահանջների կատարման վերաբերյալ դիմումները կարող եք ներկայացնել էլեկտրոնային փոստով, հեռախոսով, գրավոր՝ վերը նշված հասցեով, կամ լրացնելով առցանց ձևաթուղթ՝

https://www.ebrd.com/project-finance/independent-project-accountability-mechanism/how-ipam-works.html

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հապավում	Ամբողջական անվանում
ՏՀՔ	ՎԶԵԲ-ի՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
Հաճախորդ	Lydian International Limited
ԵՄ	Եվրոպական միություն
ԲՍ	Բնապահպանական և սոցիալական
ՇՄԿԶՎ	ՎԶԵԲ-ի՝ Շրջակա միջավայրի և կայուն զարգացման վարչություն
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԱՄՄ	Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումներ
ԲՍԳԾ	Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր
ԲՍՔ	ՎԶԵԲ-ի՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն
ԼՄՓ	Լավագույն միջազգային փորձ
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն
ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
Վարկատուներ	ՎԶԵԲ և ՄՖԿ
ԾՀՔ	Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականություն 2019թ.
ԾԲՔՄ	Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմ
ԾԲՔՄ-ի ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմի կանոնակարգը, 2014թ.
ՊՄԳ	Պետական-մասնավոր գործընկերություն
ԳՊ	Բնապահպանական և սոցիալական քաղաքականության՝ Գործունեության նկատմամբ պահանջ
Ծրագիր	Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում (48579) Ծրագիրը
ՇԿՆՊ	Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
ՍԱԳ	Սոցիալական ազդեցության գնահատում
ԵՔՓ	Երաշխիքների քաղաքականության փաստաթուղթ
ՏԱ-ToR	Տեխնիկական առաջադրանք (ուղեցույց)
ԱՄՆ դոլար	Ամերկյաի Միացյալ Նահանգների դոլար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 2

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 6

1. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 6
   - 1.1 Ծրագիրը 6
   - 1.2 Դիմումը 7
   - 1.3 Հաշվեհարդարի ռիսկը 8
   - 1.4. Դիմումի գրանցումն ու Գնահատման հաշվետվությունը 8
2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 9
3. ԱՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԴԻՐՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 10
   - 3.1. ՎՁԵԲ-ի ղեկավարության պատասխանը 10
   - 3.2. Հաճախորդի պատասխանը 11
4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌ ՈՐՈՇՈՒՄԸ 12

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ – ՏԵԽՆԻԿԱԿԱԿՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (ՈՒՂԵՑՈՒՅՑ) 14

5. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ 14
   - 5.1 Համապատասխանության ստուգման ժամանակացույցը 14
   - 5.2. Համապատասխանության ստուգման շրջանակը 15
   - 5.3. Համապատասխանության ստուգման մեթոդաբանությունը 18
   - 5.4. Համապատասխանության ստուգման հաշվետվությունը 19

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Դիմումը.

2020թ.-ի հունիսին գրանցվել է Դիմում[1]՝ կապված Հայաստանում ՎԶԵԲ-ի՝ Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում (48579) Ծրագրի հետ: Դիմումատուները պնդում են, որ (i) Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկի 5 բնակավայրերի ջրի, օդի, հողի, վայրի բնության, համայնքի առողջության և կենսապահովման վրա, (ii) Ծրագիրն առաջացրել է օդի աղտոտում փոշով և ազդել ջրամատակարարման վրա, ինչը նպաստել է խմելու և ոռոգման ջրի, ինչպես նաև Գնդեվազի ձկնաբուծարանների աղտոտմանը, (iii) ուրանի առկայության հետևանքով աղտոտումը և ծրագրի վայրից արտանետվող փոշին կարող են ազդել բնակիչների առողջության վրա, (iv) Ծրագիրը, հավանաբար, ազդել է Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ-IUCN) կարմիրգրքյան տեսակների և Բեռնի կոնվենցիայով[2] պաշտպանվող տեսակների վրա, (v) Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա՝ դրանով իսկ վնասելով քաղաքի հեղինակությանը՝ որպես հայտնի առողջարանային կենտրոն, և վերջինը (vi) ազգային ՇՄԱԳ գործընթացի շրջանակում իրականացվող հանրային քննարկումների ընթացքում Ջերմուկի համայնքի հետ խորհրդակցություններ չեն անցկացվել:

Դիմումատուները պնդում են, որ այս խնդիրները հավաքականորեն նպաստել են շրջակա միջավայրի և համայնքների, մասնավորապես՝ Ջերմուկի վրա մի շարք բնապահպանական և սոցիալական ազդեցություններին: Իրենց Դիմումում Դիմումատուները կոչ են անում ԾՀԱՄ-ին Համապատասխանության ստուգում անցկացնել:

Ծրագիրը

ՎԶԵԲ-ի՝ Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում Ծրագիրը (48579) հաստատվել է 2016թ.-ի հուլիսի 20-ին որպես A կատեգորիայի ծրագիր՝ 2014թ.-ի ԲՍՔ-ի ներքո, այն բանից հետո, երբ Lydian International Limited-ը ավարտեց Ամուլսարի ոսկու հանքավայրի հետազոտությունները և ստացավ ֆինանսավորում հանքի շահագործումը սկսելու համար: Այն իրենից ներկայացնում է ՎԶԵԲ-ի կողմից ներդրում 11,4 միլիոն կանադական դոլարի չափով՝ պահպանելու իր բաժնետոմսերը Lydian International Limited («Հաճախորդ» կամ «**Ընկերություն**») ցուցակված հանրային ընկերությունում, որը գրանցված է Ջերսիում՝ Նորմանդյան կղզիներում, ընկերության բաժնետոմսերի առքուվաճառքն իրականացվում էր Տորոնտոյի ֆոնդային բորսայում և գլխավոր ակտիվը Հայաստանում Ամուլսարի ոսկու հանքավայրն էր:

Lydian International-ը անվճարունակ դարձավ 2019թ.-ին և այդ ժամանակ դիմեց պաշտպանության, ինչը նրան թույլ տվեց վերակազմավորել իր բիզնեսն ու ֆինանսները: Արդյունքում, 2020 թվականի հուլիսից Ամուլսարի ոսկու հանքավայրը պատկանում է

[1] Եթե այլ բան նշված չէ, սույն հաշվետվության մեջ օգտագործված՝ մեծատառով գրված տերմինները նույն տերմիններն են, որոնք սահմանված են 2019թ.-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության մեջ, որին կարող եք ծանոթանալ այստեղ https://www.ebrd.com/project-finance/independent-project-accountability-mechanism/ipam-policies.html

[2] Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին Բեռնի կոնվենցիան ստորագրվել է 1979 թվականի սեպտեմբերի 19-ին և ուժի մեջ է 1982 թվականի հունիսի 1-ից:

Կանադայի Lydian Ventures-ին, որում ՎՁԵԲ-ը բաժնետեր չի հանդիսանում: ՎՁԵԲ-ն առայժմ մնում է բաժնետեր Ջերսիի Lydian International- ում, որը ակտիվներ չունի:
Այս հաշվետվության թողարկման պահի դրությամբ լուծարման վարույթը դեռ ընթացքի մեջ է, և դրա ավարտը կհանգեցնի Հաճախորդի ընկերությունում ՎՁԵԲ-ի բաժնետիրական մասնակցության դադարեցմանը:

Դիմումի՝ Համապատասխանության ստուգման չափանիշների բավարարման գնահատում

Դիմումի և ծրագրի համապատասխան փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունից և Դիմումատուների, Հաճախորդի և Բանկի ղեկավարության հետ առանցքային հարցազրույցներից հետո արված եզրակացությունների հիման վրա ԾՀԱՄ-ը համարում է, որ Դիմումը բավարարում է Համապատասխանության ստուգման չափանիշներին, ինչպես սահմանված է ԾՀԱՄ-ի քաղաքականության 2.6 բաժնում, այսինքն՝

- Նախնական քննության արդյունքում պարզվել է, որ Ծրագիրը, հավանաբար, պատճառել է կամ կարող է պատճառել ուղղակի կամ անուղղակի և նյութական վնաս Դիմումատուներին (կամ, եթե նրանք տարբեր են՝ Ծրագրի համապատասխան ազդակիր անձանց), և
- Կան նշաններ, որ Բանկը, հավանաբար, չի համապատասխանել 2014թ.-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը (ԲՍՔ) հետևյալ կետերով.
    - Գործունեության նկատմամբ պահանջ (ԳՊ) #1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում,
    - Գործունեության նկատմամբ պահանջ #3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն,
    - Գործունեության նկատմամբ պահանջ #4. Առողջապահություն և անվտանգություն,
    - Գործունեության նկատմամբ պահանջ #6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում,
    - Գործունեության նկատմամբ պահանջ #8. Մշակութային ժառանգություն,
    - Գործունեության նկատմամբ պահանջ #10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն:

Ուստի ԾՀԱՄ-ի ղեկավարը որոշել է, որ Դիմումը բավարարում է Համապատասխանության ստուգման չափանիշներին, ինչպես սահմանված է 2019թ.-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականությունում: Հետևաբար, 2020թ.-ի նոյեմբերին ԾՀԱՄ-ը կնախաձեռնի Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում (48579) ծրագրի Համապատասխանության ստուգում:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1.1 Ծրագիրը

ՎԶԵԲ-ի՝ Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում Ծրագիրը (48579) հաստատվել էր 2016թ.-ի հուլիսի 20-ին որպես A կատեգորիայի ծրագիր 2014թ.-ի ԲՍՔ-ի ներքո, այն բանից հետո, երբ Lydian International Limited-ը ավարտել էր Ամուլսարի ոսկու հանքավայրի հետազոտությունները և ստացել ֆինանսավորում հանքի շահագործումը սկսելու համար: Ծրագիրն իրենից ներկայացնում է ՎԶԵԲ-ի ներդրում 11,4 միլիոն կանադական դոլարի չափով՝ պահպանելու իր բաժնետոմսերը Lydian International Limited («Հաճախորդ» կամ «Ընկերություն») ցուցակված հանրային ընկերությունում, որը գրանցված է Ջերսիում՝ Նորմանդյան կղզիներում, ընկերության բաժնետոմսերի առքուվաճառքն իրականացվում էր Տորոնտոյի ֆոնդային բորսայում և գլխավոր ակտիվը Հայաստանում Ամուլսարի ոսկու հանքավայրն էր: Այսպես տրամադրված ֆինանսավորումը նախատեսված էր Ամուլսարի ոսկու հանքի շահագործման Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ) կապակցությամբ ընկերության կողմից ձեռնարկված՝ Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումների (ԲՍԱՄՄ) ֆինանսավորման համար[3]: Ընկերության կապիտալում ներդրումը համալրում էր Բանկի ավելի վաղ ներգրավվածությունը Ծրագրի հետազոտման և մշակման փուլում:

2016թ.-ի հոկտեմբերին Ծրագիրը նախաձեռնել է շինարարական աշխատանքներ, որոնք շարունակվել են մինչև 2018-ի հունիսը, երբ ցույցերի ժամանակ տեղական ցուցարարները կանխեցին մուտքը դեպի հանքավայր: Հանքի շարունակական շրջափակման պատճառով 2018թ.-ի հունիսից մինչ օրս ծրագրի հետ կապված բոլոր գործողությունները դադարեցված են:

Lydian International-ը անվճարունակ դարձավ 2019թ.-ին, և այդ ժամանակ նա դիմեց պաշտպանության, ինչը նրան թույլ տվեց վերակազմավորել իր բիզնեսն ու ֆինանսները: Վերոհիշյալի հիման վրա ընդունվեց կորպորատիվ վերակազմավորման պլան, որի արդյունքում ակտիվներն այժմ պատկանում են Ընկերության առկա ավագ ապահովված վարկատուներին Lydian Canada, Lydian UK և Lydian Armenia ՓԲԸ և վերահսկվում նրանց կողմից, իսկ Lydian International Limited ընկերության փակման գործը Ջերսիի իրավասու դատարանում է: 2020թ.-ի հուլիսի 20-ի դրությամբ Ամուլսարի ոսկու հանքավայրը պատկանում է Կանադայի Lydian Ventures- ին, որի բաժնետեր ՎԶԵԲ-ը չի հանդիսանում: ՎԶԵԲ-ն առայժմ մնում է բաժնետեր Ջերսիի Lydian International- ում, որը ակտիվներ չունի: Այս հաշվետվության թողարկման պահի դրությամբ լուծարման վարույթը դեռ ընթացքի մեջ է, և դրա ավարտը կհանգեցնի Հաճախորդի ընկերությունում ՎԶԵԲ-ի բաժնետիրական մասնակցության դադարեցմանը:

ՎԶԵԲ-ը դադարեցրեց Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) իրականացման ակտիվ մոնիտորինգը, երբ դադարեց տեղանքում գործունեությունը: Վերացան բոլոր հավաստի մեխանիզմները, որոնցով ՎԶԵԲ-ը կարող էր

[3] Ծրագրի ամփոփ փաստաթղթին կարող եք ծանոթանալ այստեղ. https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/lydian-amulsar-gold-mine-extension.html

շարունակել վերահսկել Հաճախորդին և Ծրագիրը: Հասկանալի է, որ միևնույն ժամանակ դադարեց նաև ՎՁԵԲ-ի ֆինանսական հետաքրքրությունը Ամուլսարի ծրագրում:

2006թ.-ի հոկտեմբերին Ծրագիրը նախաձեռնել էր շինարարական աշխատանքներ, որոնք շարունակվել էին մինչև 2018թ.-ի հունիսը, երբ տեղի ցուցարարները արգելափակեցին մուտքը դեպի հանք: Հանքի շարունակական շրջափակման պատճառով 2018թ.-ի հունիսից մինչ օրս դադարել են ծրագրի հետ կապված բոլոր գործողությունները:

1.2 Դիմումը

ԾՀԱՄ-ը Ծրագրի վերաբերյալ դիմում է ստացել 2020թ. մայիսի 19-ին[4], Դիմումը գրանցվել է 2020թ.-ի հունիսի 12-ին և հրապարակվել ԾՀԱՄ-ի Գործերի գրանցամատյանում:

Դիմումը (Հավելված 1) Դիմումը համատեղ ներկայացվել և ստորագրվել է տեղի քսաներեք բնակիչների, տարածաշրջանային ՔՀԿ՝ CEE Bankwatch Network -ի, և տեղական չորս ՔՀԿ-ների կողմից: (i) «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, (ii) «Հայաստանի անտառներ» ՀԿ, (iii) «Կանաչ Հայաստան» ՀԿ և (iv) «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն: Դիմումատուները պնդում են, որ Բանկը խախտել է 2014թ.-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության և տեղեկությունների հանրայնացման պահանջները: Ամփոփելով, Դիմումատուները բարձրացրել են իրենց մտահոգող հետևյալ հարցերը.

- Գործունեության նկատմամբ պահանջ 1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկի 5 բնակավայրերի ջրի, օդի, հողի, վայրի բնության, համայնքի առողջության և կենսապահովման վրա,
- Գործունեության նկատմամբ պահանջ 3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրն առաջացրել է օդի աղտոտում փոշով և ազդել ջրամատակարարման վրա, ինչը նպաստել է խմելու և ոռոգման ջրի, ինչպես նաև Գնդեվազի ձկնաբուծարանների աղտոտմանը,
- Գործունեության նկատմամբ պահանջ 4: Առողջապահություն և անվտանգություն - Դիմումատուները պնդում են, որ ուրանի առկայության հետևանքով աղտոտումը և ծրագրի վայրից արտանետվող փոշին կարող են ազդել բնակիչների առողջության վրա,
- Գործունեության նկատմամբ պահանջ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը, հավանաբար, ազդել է Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ-IUCN) կարմիրգրքյան տեսակների և Բեռնի կոնվենցիայով պաշտպանվող տեսակների վրա[5],
- Գործունեության նկատմամբ պահանջ 8. Մշակութային ժառանգություն - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա՝ դրանով իսկ վնասելով քաղաքի հեղինակությանը որպես հայտնի առողջարանային կենտրոն, և վերջինը.

[4] Դիմում 2020/02, հասանելի է Գործերի գրանցամատյանում և սույն հաշվետվության Հավելված 1-ում:
[5] Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին Բեռնի կոնվենցիան ստորագրվել է 1979 թվականի սեպտեմբերի 19-ին և ուժի մեջ է 1982 թվականի հունիսի 1-ից:

- Գործունեության նկատմամբ պահանջ 10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն - Դիմումատուները պնդում են, որ տեղական ՇՄԱԳ գործընթացի շրջանակում իրականացվող հանրային քննարկումների ընթացքում Ջերմուկի համայնքի հետ խորհրդակցություններ չեն անցկացվել:

Բացի այդ, Դիմումում կան պնդումներ, որ այս խնդիրները համատեղ հանգեցրել են ծրագրի շրջակայքում գտնվող համայնքների և հողերի վրա բնապահպանական և սոցիալական ազդեցությունների, հատկապես զգալի ազդեցություն են կրել Ջերմուկ համայնքի բնակիչները: Դիմումատուները պահանջում են դադարեցնել Ծրագիրը և անցկացնել ազդեցությունների ամբողջական ուսումնասիրություն ԾՀԱՄ-ի կողմից ձեռնարկված՝ Համապատասխանության ստուգման գործընթացի միջոցով:

1.3 Հաշվեհարդարի ռիսկը

Գրանցման փուլից Դիմումատուները ԾՀԱՄ-ին և Բանկի ղեկավարությանը հայտնել են շրջափակման վայրում Ծրագրի ազդակիր բնակիչների, մասնավոր պահնորդական կազմակերպության աշխատակիցների և տեղական ոստիկանության միջև մի շարք առճակատումների մասին: Բացի այդ, ԾՀԱՄ-ի հետ հաղորդակցության ընթացքում Դիմումատուները բարձրաձայնել են հաշվեհարդարի հետ կապված իրենց մտավախությունները, ինչը պատճառ է հանդիսացել ԾՀԱՄ-ի կողմից գնահատման փուլում Հաշվեհարդարի ռիսկերի գնահատման անցկացման համար: Գործի առաջընթացի հետ մեկտեղ, ԾՀԱՄ-ը պարբերաբար կվերագնահատի այդ ռիսկերը և, ըստ անհրաժեշտության, կիրականացնի կանխարգելիչ միջոցառումներ՝ Դիմումատուների հետ խորհրդակցելուց հետո:

1.4. Դիմումի գրանցումն ու Գնահատման հաշվետվությունը

2020 թվականի հուլիսի 1-ին Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմը (ԾԲՔՄ) փոխարինվեց Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմով (ԾՀԱՄ) և ուժի մեջ մտավ 2019թ.-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականությունը (ԾՀՔ): Հետևապես և այդ օրվանից ի վեր սույն Դիմումի կառավարումն իրականացվում է ըստ 2019թ.-ի ԾՀՔ-ի V բաժնում սահմանված անցումային դրույթների, որոնք կիրառելի են գնահատման փուլում գտնվող գործերի նկատմամբ: Այս ուղեցույցի համաձայն և գնահատման փուլի ընթացքում, Դիմումը ստուգվել է՝ համոզվելու և հաստատելու, որ Դիմումը պատշաճ կերպով համապատասխանում է ԾՀԱՄ-ի՝ 2019թ.-ի քաղաքականության մեջ նշված գրանցման բոլոր չափանիշներին:

ԾՀԱՄ-ի քաղաքականության 2.3 պարբերության համաձայն, ԾՀԱՄ-ը իրականացրել է Գնահատում և որոշել.

- Խնդիրների լուծման գործառույթը սահմանափակ ներուժ ունի կառուցողական երկխոսություն վարելու և դրական արդյունքի հասնելու համար Կողմերի միջև վստահության բացակայության պատճառով՝ հաշվի առնելով մի շարք խախտված համաձայնությունների մասին Դիմումատուների կողմից ներկայացված մեղադրանքները:
- Չկան նշաններ, որ Կողմերը կկարողանան պահպանել անվտանգ միջավայր բովանդակալից երկխոսություն վարելու համար, և

- Կողմերը սկզբունքային և անհաշտելի տարաձայնություններ ունեն, որոնք հնարավոր չէ լուծել Խնդիրների լուծման նախաձեռնության ընթացքում:

Գնահատման արդյունքների հիման վրա և Քաղաքականության պարբերություն 2.3. a)-ի (v) կետի b) տառի համաձայն, Դիմումը փոխանցվել էր Համապատասխանության գնահատման գործառույթին, քանի որ ԾՀԱՄ-ը որոշել էր, որ Խնդիրների լուծման գործընթացում ներգրավվելն իրագործելի չէ: Դիմումատուները նույնպես հայտնել էին իրենց հետաքրքրությունը, որպեսզի Դիմումը փոխանցվի Համապատասխանության ստուգման գործառույթին: Ամույսարի ծրագրի գնահատման հաշվետվությունը, որտեղ մանրամասն նկարագրված են այս եզրակացությունները, թողարկվել է 2020թ.-ի օգոստոսի 7-ին:

2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պարզելու համար, թե արդյոք բավարարվել են Համապատասխանության գնահատման չափանիշները, որոնք ամրագրված են 2019թ.-ի Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության 2.6 բաժնում, ԾՀԱՄ-ը ուսումնասիրել է Դիմումը, օժանդակ փաստաթղթերը, ինչպես նաև Դիմումատուների, ՎՁԵԲ-ի ղեկավարության և Հաճախորդի կողմից կողմից տրամադրված այլ տեղեկությունները:

Գնահատման գործընթացն իրականացվել է հետևյալ կերպով.

- Կատարվել է Դիմումի, ինչպես նաև Կողմերի տրամադրված օժանդակ փաստաթղթերի և տարածական տվյալների խորացված ուսումնասիրություն և վերլուծություն և ԾՀԱՄ-ի կողմից անկախ հետազոտություն,
- Անցկացվել է 2020 թ.-ի սեպտեմբերի 7-ին ՎՁԵԲ-ի կողմից տրամադրված՝ Դիմումի պաշտոնական գրավոր պատասխանի[6] քննություն (տե՛ս Հավելված 2-ը),
- ԾՀԱՄ-ը խնդրել է իրեն տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր՝ մինչ այդ տրամադրված՝ Ծրագրի փաստաթղթերի գրասենյակային ուսումնասիրության առաջին փուլի հիման վրա և,
- Դիմումատուների, Հաճախորդի և ՎՁԵԲ-ի ղեկավարության հետ մի շարք հանդիպումներ են հրավիրվել՝ քննարկելու իրենց տեսակետները տրամադրված փաստաթղթերի և նյութերի վերաբերյալ՝ շարունակելով գրավոր հաղորդակցությունը 2020թ.-ի հոկտեմբերի ամբողջ ընթացքում:

COVID-19-ի (կորոնավիրուսի) համաճարակի համատեքստում և հաշվի առնելով մեր՝ առողջության և անվտանգության պահպանման հանձնառությունը այս ճգնաժամի ընթացքում և Բանկի մորատորիումը ճամփորդությունների վերաբերյալ, Համապատասխանության գնահատման փուլում տեղայց չի կատարվել: Չնայած սահմանափակումներին, տրամադրված ծավալուն փաստաթղթերը և տարածական տվյալները, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերի հետ ակտիվ առցանց շփումը

[6] Հաճախորդին առաջարկվել էր գրավոր պատասխան ներկայացնել, սակայն նա նախընտրել է դա չանել:

համարվել են բավարար՝ անցկացնելու գնահատումը և անցնելու Համապատասխանության ստուգմանը ԾՀՔ-ի դրույթների հիման վրա:

3. ԱՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՎՁԵԲ-ի Ղեկավարության և Հաճախորդի կողմից ներկայացված՝ Դիմումի վերաբերյալ պաշտոնական պատասխանները հերթով ամփոփված են ստորև:

3.1. ՎՁԵԲ-ի ղեկավարության պատասխանը

ՎՁԵԲ-ի ղեկավարությունը պնդում է, որ ներդրել է զգալի ռեսուրսներ (տասը և ավելի տարիների ժամանակահատվածում), որպեսզի Ծրագիրը կազմվի այնպես, որ համապատասխանի Դիմումի մեջ նշված ԳՊ-ներին: Նրանք պնդում են, որ Դիմումի մեջ բարձրացված յուրաքանչյուր խնդիր մանրամասն գնահատվել է և քննարկվել Դիմումատուների հետ:

Անդրադառնալով ԳՊ 1-ին՝ ղեկավարությունը նշում է, որ Դիմումի մեջ բարձրացված յուրաքանչյուր խնդիր բազմակողմանիորեն գնահատվել և զեկուցվել է Ամուլսարի ԲՍԱԳ-ի յուրաքանչյուր տարբերակում: Նրանք նաև պնդում են, որ օժանդակ տեխնիկական փաստաթղթերը հանրայնացվել են, կամ այլ կերպ են տրամադրվել ծրագրի շահագրգիռ կողմերին, և, որ այդ փաստաթղթերը հաստատում են, որ այդ խնդիրներից յուրաքանչյուրը գնահատվել է, և, անհրաժեշտության դեպքում, մշակվել են ազդեցության մեղմման միջոցառումներ՝ բավարարելու ԳՊ 1-ը: Վերջում նրանք պնդում են, որ հանքարդյունաբերության ծրագրերի բնույթն այնպիսին է, որ ծրագրի ազդեցությունն անխուսափելի է, սակայն, այնուամենայնիվ, ազդեցության մեղմման միջոցառումները և, անհրաժեշտության դեպքում՝ իրենց կողմից մշակված փոխհատուցման պլանները համապատասխանում էին ԳՊ-ներին:

Անդրադառնալով ԳՊ 3-ին՝ ղեկավարությունը հաստատում է, որ նրանք սերտորեն մշտադիտարկել են Ծրագրի շինարարության փուլը [մինչև տեղանքի շրջափակումն ու փակումը 2018թ.-ին]՝ համապատասխան որակավորում ունեցող և միջազգայնորեն ճանաչված հանքարդյունաբերության ոլորտի խորհրդատվական կազմակերպության աջակցությամբ, որը հաստատել է, որ ազդեցությունների մեղմման միջոցառումները մշակվել են Լավագույն միջազգային փորձին համապատասխան: Բացի այդ, նրանք նշում են, որ ՎՁԵԲ-ը վերանայել է Բողոքարկման մեխանիզմը՝ համոզվելու համար, որ շինարարական գործունեության հետ կապված ցանկացած բողոք արդյունավետ, ժամանակին և պատշաճ կերպով լուծվել է և յուրաքանչյուր բողոք համարժեք լուծում է ստացել: Ինչ վերաբերում է խմելու և ոռոգման ջրի մատակարարման խափանումների մասին պնդումներին, ղեկավարությունը հաստատում է, որ Հաճախորդը վերականգնել է Գնդեվազ ջրանցքը, որը Ոռոտան գետից ոռոգման ջուր էր մատակարարում Գնդեվազ, ինչը կոմպենսացրել է շինարարության ընթացքում ոռոգման ջրի մատակարարման խափանումները (և ճանաչվել որպես ազդեցության մեղման միջոցառում):

Ինչ վերաբերում է ԳՊ 4-ին, ղեկավարությունը հաստատում է, որ ուրանի պոտենցիալ առկայությունը և տեղական համայնքների վրա ազդեցությունը վճռականորեն հաշվի չի առնվել և դա ներկայացվել է ԲՍԱԳ-ում:

ԳՊ 6-ի առնչությամբ ղեկավարությունը հաստատում է, որ ԲՍԱԳ-ի նախապատրաստման ընթացքում հստակեցվել են կենսաբազմազանության առաջնահերթ առանձնահատկությունները և կարևոր կենսամիջավայրը: Լայնածավալ աշխատանքներ

են իրականացվել՝ ապահովելու «զրոյական զուտ կորուստներ» ՎԶԵԲ-ի ԳՊ 6-ի՝ ազդեցությունների մեղմման հիերարխիային համահունչ: Նրանք պնդում են, որ Կենսաբազմազանության գործողությունների ծրագրի և Կենսաբազմազանության կառավարման պլանների (որոնք ներառում էին փոխհատուցման ռազմավարություն) իրականացումն ընթացքի մեջ էր՝ ապահովելու ԳՊ 6-ի կատարումը, և մինչև վերջերս, փոխհատուցման ռազմավարությունը հաջողությամբ էր ընթանում՝ մինչև տեղանքի շրջափակումը ցուցարարների կողմից, ինչը նշանակում է, որ փոխհատուցման միջոցառումների իրականացումը դադարեցվել է, և դա խաթարել է ծրագրի կողմից ԳՊ 6-ի հետ կապված պարտավորությունները լիարժեք կատարելու հնարավորությունը: Ինչ վերաբերում է Դիմումատուների կողմից Բեռնի կոնվենցիային ներկայացված զուգահեռ բողոքին, ՎԶԵԲ-ը հայտնում է, որ վստահ է, որ ԳՊ 6-ին համապատասխանությունը հնարավոր է ապացուցել, և Բեռնի կոնվենցիայի առանձնահատկությունների հետ կապված ցանկացած խնդիր կլուծվի համապատասխան ուղիներով Քարտուղարության և Հայաստանի կառավարության միջև:

ԳՊ 8-ի առնչությամբ ղեկավարությունը նշում է, որ ճանաչվել է, որ շինարարության փուլում աշխատողների ներհոսքը և նրանց տեղավորումը Ջերմուկի վրա Ծրագրի հիմնական ազդեցություններն են: Նրանք հաստատում են, որ այդ ասպեկտները բազմակողմանիորեն գնահատվել են, և խորհրդակցություններ են անցկացվել ինչպես Ջերմուկում, այնպես էլ Երևանում, և որ ԳՊ 8-ին համապատասխանելու նպատակով սահմանվել են ազդեցության մեղմման միջոցառումներ: Նրանք կարծիք են հայտնում, որ շրջափակման արդյունքում ծրագրի օգուտները Ջերմուկի և հարակից համայնքների համար, ներառյալ զբաղվածության ապահովումը, մատակարարման շղթայի ստեղծումը և համայնքներում ներդրումները դադարեցվել են: Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա հնարավոր ազդեցությունները դիտարկվել են ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակի բոլոր համապատասխան գլուխներում: Նրանք հայտնում են, որ արդյունքում Ծրագիրը կառուցվել է այնպես, որ համապատասխանի ԳՊ 8-ին, ինչպես երևում է բոլոր համապատասխան ուսումնասիրություններից և խորհրդատվությունների արձանագրություններից:

Անդրադառնալով ԳՊ 10-ին՝ ղեկավարությունը մեկնաբանում է, որ ՎԶԵԲ-ի ԲՍՔ-ն նախատեսված է համալրելու և լրացնելու ՇՄԱԳ-ի նկատմամբ ազգային պահանջները, և ծրագրի ազդակիր անձանց և համայնքների հետ ծրագրի տարածքում և դրա շրջակայքում իրականացված լայնածավալ խորհրդատվությունների մանրամասները տրամադրվել են [ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակ] և ներառել շահագրգիռ կողմերի հետ բազմաթիվ հանդիպումները Ջերմուկում: Ղեկավարությունը հաստատում է, որ տասնամյակի ընթացքում Հաճախորդի կողմից իրականացվել են խորհրդատվություններ, այդ թվում՝ Ջերմուկի հինգ համայնքներում, ԳՊ 10-ի պահանջներին համապատասխան:

3.2. Հաճախորդի պատասխանը

Հաճախորդի հետ անցկացված հանդիպումների ժամանակ ներկայացվել է Դիմումում բարձրացված խնդիրների հերքումը, ինչպես նաև մի շարք օժանդակ ուսումնասիրություններ: Բացի այդ, նրանք տեղեկացրել են դեռևս 2007թ.-ից սկսված՝ իրենց վերահսկողական գործունեության մասին, Դիմումում բարձրացված յուրաքանչյուր խնդրի առնչությամբ: Այնուհետև Հաճախորդը, ներկայացնելով իրենց ներգրավվածությունը հիմնավորող փաստերն ու փաստարկները և հղում անելով ՎԶԵԲ-ի ղեկավարության կողմից տվյալ խնդիրների վերաբերյալ տրված ուղեցույցին, շեշտել է, որ

իրենք հավատացած են, որ շատ դեպքերում և, մասնավորապես, ԳՊ 10-ի (Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի ներգրավում) և ԳՊ 6-ի (Կենսաբազմազանության պահպանում և կայուն կառավարում) հետ կապված խնդիրների պարագայում նրանք գերազանցել են պահանջները բավարարելու և վերահսկողություն իրականացնելու մակարդակները, որոնք պահանջվում են նման բնույթի ծրագրերից:

Դիմումում բարձրացված բոլոր խնդիրների առնչությամբ տրամադրվել են ԳՊ-ների հետ կապված համակողմանի ուսումնասիրության (due diligence) և վերահսկողության մանրամասն նկարագրությունները, ինչպես նաև ներկայացվել են հղումներ հետագա վերլուծություններին և ուսումնասիրություններին: Հաճախորդը հաստատել է, որ իրենց կարծիքով Դիմումում հնչեցված խնդիրները վավեր չեն, և ողջունել է լիարժեք հետաքննություն անցկացնելու գաղափարը՝ այդ հարցերն ավելի խորը ուսումնասիրելու համար, եթե դա պահանջվի:

4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄԸ

Բաժին 2.6 (b)-ում նկարագրված՝ Համապատասխանության գնահատման գործընթացի միջոցով ԾՀԱՄ-ը հաստատել է, որ Դիմումը համապատասխանում է Համապատասխանության ստուգման չափանիշներին, որոնք սահմանված են 2019թ.-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության մեջ, այսինքն.

i. Տպավորությունն այն է, որ Ծրագիրը, հավանաբար, պատճառել է կամ կարող է պատճառել ուղղակի կամ անուղղակի և նյութական վնաս Դիմումատուներին, և

ii. Կան նշաններ, որ Բանկը, հավանաբար, չի համապատասխանել 2014թ.-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության դրույթներին և Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կոնկրետ դրույթներին, որոնք վերաբերում են Ծրագրին և ուժի մեջ են եղել Ծրագրին հավանություն տալու պահին,

Համապատասխանության գնահատման ժամանակ (առկա տեղեկությունների հիման վրա) անցկացված նախնական ստուգումն ազդարարեց, որ կա անհրաժեշտություն, որպեսզի ԾՀԱՄ-ը ավելի մեծ խորությամբ վերլուծի Դիմումում մեջբերված համապատասխան ԳՊ-ների առնչությամբ բարձրացված մի շարք խնդիրներ, որոնք միասին հիմք են հանդիսանում հետագա հետաքննություն անցկացնելու համար: Այս պահին, COVID-19-ի հետ կապված սահմանափակումների պատճառով ԾՀԱՄ-ը որոշում է կայացրել ներառել Դիմումում բարձրացված բոլոր խնդիրները, բայց հետաքննության ընթացքում շրջանակը կարող է վերանայվել:

Դիմումում առկա են մի շարք պնդումներ Ծրագրի թե՛ փաստացի և թե՛ պոտենցիալ վնասների մասին՝ սկսած համայնքի առողջության վրա բացասական ազդեցությունից և վերջացրած ջրի աղտոտման և փոշով աղտոտման սաստկացման պատճառով տարածքի տնտեսական գործունեության (հողագործության, զբոսաշրջության) խափանումով, ինչպես նաև ծանր մետաղների անբավարար կառավարման և կենսաբազմազանության կորստի պատճառով: Ըստ պնդումների, ջրի և օդի աղտոտման, ջրամատակարարման խափանման և կենսամիջոցների կորստի հետևանքով արդեն իսկ փաստացի վնաս է

հասցվել շրջակա միջավայրին: Բացի այդ, Դիմումատուները պնդում են Ծրագրին ընդդիմանալու պատճառով իրենց հասցված վնասների և հաշվեհարդարի մասին:

Հետևաբար, ԾՀԱՄ-ը եզրակացրել է, որ, քանի որ Դիմումում բարձրացված տարբեր խնդիրների վերաբերյալ Կողմերը հակասական տեղեկություններ են տրամադրել և քանի որ համապատասխանության գնահատման գործընթացի ժամանակ հայտնաբերվել են «պոտենցիալ բացեր» և պետք է հաշվի առնել վնասի մասին մեղադրանքների լուրջ բնույթը, կպահանջվի համապատասխանության ստուգման գործընթաց՝ ամբողջությամբ պարզելու Դիմումում մեջբերված համապատասխան ԳՊ-ների հետ կապված բարձրացված յուրաքանչյուր խնդրի առնչությամբ Բանկի համապատասխանությունը/անհամապատասխանությունը: Զուգահեռաբար, ԾՀԱՄ-ն ընդունում է, որ Համապատասխանության ստուգման շրջանակը նաև պետք է հաշվի առնի վերջերս ՎՁԵԲ-ի՝ ծրագրից ակամա դուրս գալու և Հաճախորդի հետ հարաբերություններն ավարտելու փաստը, և, հետևաբար, պետք է ձգտի հետաքննությունը կենտրոնացնել համակարգային խնդիրների բացահայտման վրա, որոնք, հավանաբար, կարող են բացասաբար ազդել համայնքների վրա ինչպես այս ծրագրում, այնպես էլ Բանկի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերում, բայց կարող են նաև ազդել ծրագրի կատարման և գործարքների բնապահպանական և սոցիալական կայունության վրա և, ի վերջո՝ ՎՁԵԲ-ի հեղինակության վրա:

Համապատասխանության ստուգման գործընթացը կսկսվի 2020 թ.-ի նոյեմբերին, սույն Համապատասխանության գնահատման հրապարակման պահից հինգ աշխատանքային օրերի ընթացքում: Համապատասխանության ստուգման Տեխնիկական առաջադրանքը (ուղեցույցը) - ToR - ներկայացված է ստորև.

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ - ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (ՈՒՂԵՑՈՒՅՑ)-TOR

5. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Տվյալ Համապատասխանության ստուգման համար սույն Տեխնիկական առաջադրանքը (ուղեցույցը) տարածվում է բոլոր գործողությունների վրա, որոնք իրականացվել են որպես *Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք)* ծրագրի՝ ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող բաղադրիչներ: Համապատասխանության ստուգման նպատակն է. պարզել՝ արդյոք Բանկը, իր գործողությունների կամ անգործության արդյունքում, խախտել է 2014թ.-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը Ծրագրի՝ ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող բաղադրիչի մասով:

Գործողությունները, որոնք իրականացվում են Համապատասխանության ստուգման սույն տեխնիկական առաջադրանքի (ուղեցույցի) համաձայն, կարող են փոփոխության ենթարկվել, պայմանով, որ ԾՀԱՄ-ի ղեկավարը հստակորեն համաձայն է փոփոխություն (-ներ) անելուն, և, որ այդ փոփոխությունները չեն վնասում որևէ Կողմի շահերին:

Համապատասխանության ստուգումը կանցկացվի **չեզոք, անկախ և անկողմնակալ կերպով** և կառաջնորդվի օբյեկտիվության և արդարության սկզբունքներով՝ հաշվի առնելով (ի թիվս այլոց) Կողմերի իրավունքներն ու պարտականությունները և Դիմումի հետ կապված ընդհանուր հանգամանքները և դրսևորելով պատշաճ հարգանք ՎԶԵԲ-ի անձնակազմի նկատմամբ:

2019թ.-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության դրույթներին համահունչ, համապատասխանության ստուգման գործընթացը ղեկավարվելու է ԾՀԱՄ-ի աշխատակազմի կողմից, և, անհրաժեշտության դեպքում, նրան կաջակցեն արտաքին տեխնիկական փորձագետները: ԾՀԱՄ-ի ղեկավար՝ տիկին Վիկտորյա Մարկես-Մեեսը, պատասխանատու է համապատասխանության ստուգման գործընթացի վերահսկման և գործընթացի արդյունքում ընդունված որոշումների համար:

5.1 Համապատասխանության ստուգման ժամանակացույցը

Համապատասխանության ստուգումը կսկսվի բոլոր Կողմերի հետ Տեխնիկական առաջադրանքը (ուղեցույցը) քննարկելուց հետո և Համապատասխանության գնահատման սույն հաշվետվությունը ԾՀԱՄ-ի Գործերի գրանցամատյանում հրապարակելուց հետո: 2019թ.-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականության (ԾՀՔ) համաձայն, Համապատասխանության ստուգումը կանցկացվի հնարավորինս արագ՝ մեկնարկից 140 աշխատանքային օրվա ընթացքում: Ստորև ներկայացված է հիմնական ուղենիշների նախնական ժամանակացույցը.

Միջոցառում	Նախատեսված ամսաթիվը

Համապատասխանության ստուգման մեկնարկ	2020թ.-ի նոյեմբերի 9-ը
Հեռախոսազրույցներ բոլոր կողմերի հետ	2021թ.-ի հունվարի 4-ից – 22-ը
Տեղայց և խորհրդակցություններ*	2021թ.-ի փետրվար-մարտ
Կողմերին կներկայացվի Հաշվետվության նախագիծը**	2021 թվականի ապրիլի 5-ին սկսվող շաբաթվա ընթացքում
Վերջնական հաշվետվությունը կուղարկվի Տնօրենների խորհրդին	2021թ. մայիսի 17-ին սկսվող շաբաթվա ընթացքում

* Եթե լինի ճանապարհորդելու հնարավորություն՝ հաշվի առնելով տարածաշրջանում կայունության մակարդակը և համաշխարհային համաճարակի ներքո անձնակազմի ճանապարհորդությունների ընթացիկ մորատորիումը:
** Եթե հայտնաբերվի անհամապատասխանություն 2014թ.-ի ԲՍՔ-ին:

Հաշվի առնելով ընթացիկ գլոբալ կորոնավիրուսային համաճարակը, ՎՁԵԲ-ի գործող մորատորիումը աշխատակիցների ճանապարհորդությունների նկատմամբ, ինչպես նաև տարածաշրջանում շարունակվող անկայունությունը, գուցե անհրաժեշտություն լինի ժամանակացույցը կազմել՝ հաշվի առնելով իրողությունը տեղում, ինչը կարող է ազդեցություն ունենալ այս գործի ավարտի ժամկետների վրա: Համապատասխանության ստուգման գործընթացի շրջանակին և ժամկետներին վերաբերող վերջնական որոշումները կընդունվեն ԾՀԱՄ-ի ղեկավարի հայեցողությամբ:

5.2. Համապատասխանության ստուգման շրջանակը

Համապատասխանության ստուգման շրջանակը ներկայացված է ստորև և հիմնված է Դիմումում բարձրացված խնդիրների վրա, ինչպես նաև ԾՀԱՄ-ի գնահատողների կողմից տվյալների առաջնային և երկրորդային հավաքագրման արդյունքների և 2014թ.-ի՝ ԲՍՔ-ի համապատասխան դրույթների դիտարկման վրա: Չնայած Տեխնիկական առաջադրանքը (ուղեցույցը) հղում է անում կոնկրետ ԳՊ-ների, այն հաշվի է առնում (և հետագայում չի բացառում) տարբեր ԳՊ- ների միջև հնարավոր փոխկապակցվածությունը:

Ինչ վերաբերում է 2014թ.-ի ԲՍՔ-ից բխող ընդհանուր հանձնառություններին.

a) Արդյո՞ք Բանկն իր մանդատի շրջանակներում և իր՝ բնապահպանական և սոցիալական գնահատման և մոնիտորինգի գործընթացների միջոցով փորձել է ապահովել, որ Ծրագիրը մշակվի կիրառելի կարգավորող պահանջների և լավագույն միջազգային փորձի համաձայն, B.6 պարբերությանը համապատասխան[7]:

[7] Կարգավորման պահանջները, որոնք ուժի մեջ էին բնապահպանական և սոցիալական փորձաքննության ժամանակ, ինչպես նաև/կամ մինչ օրս Ծրագրի մոնիտորինգի ընթացքում գործող պահանջները:

Մասնավորապես, արդյո՞ք Բանկը ճանաչել է իր գործունեության երկրներում Բնապահպանական և սոցիալական միջազգային համաձայնագրերի, պայմանագրերի և կոնվենցիաների վավերացումը, B.8 պարբերությանը համաձայն:

b) Արդյո՞ք Բանկը ԲՍԱԳ գործընթացի ժամանակ բովանդակալից երկխոսություն է վարել շահագրգիռ կողմերի հետ, համաձայն Բանկի՝ Հանրային տեղեկատվության քաղաքականության (ինչպես նկարագրված է ԲՍՔ- ի B.15 պարբերությունում):

c) Արդյո՞ք Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման գործընթացի ժամանակ Բանկը խթանել է Հաճախորդի կողմից լավագույն փորձի կիրառումը շահագրգիռ կողմերի ներգրավման և տեղեկությունների տրամադրման ընթացքում, ԲՍՔ B.15-ի և ԳՊ 10.2-ի համաձայն:

Գործունեության նկատմամբ պահանջ 1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում

Արդյո՞ք Բանկը իր մանդատի շրջանակներում փորձել է իր՝ բնապահպանական և սոցիալական գնահատման և մոնիտորինգի գործընթացների միջոցով ապահովել, որ Ծրագիրը նախագծվի A կատեգորիայի ծրագրերի նկատմամբ պահանջներին համապատասխան, համաձայն ԳՊ 1.10-ի:

Որպես ծրագրի մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման պահանջների մաս, արդյո՞ք Բանկը, իր մանդատի շրջանակներում, ձգտել է ապահովել, որ մոնիտորինգի պահանջները համաչափ լինեն ծրագրի բնույթին և դրա բնապահպանական և սոցիալական ազդեցություններին և խնդիրներին: Մասնավորապես, ինչպե՞ս է Բանկը փորձել համոզվել, որ ծրագրի մոնիտորինգը համապատասխանում է ԳՊ 1.25-ով սահմանված պահանջներին, և, որ Բանկի կողմից վերահսկողությունը բավարարում է ԳՊ 1.26-ում, ԳՊ 1.27-ում, ԳՊ 1.28-ում և ԳՊ 1.29-ում նշված պահանջները:

Գործունեության նկատմամբ պահանջ 3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն

Արդյո՞ք Բանկը ձգտել է ապահովել, որ Հաճախորդի՝ շրջակա միջավայրի և սոցիալական գնահատման գործընթացը հայտնաբերի աղտոտման կանխարգելման և վերահսկման համապատասխան մեթոդները, տեխնոլոգիաներն ու պրակտիկան, որոնք կիրառելի են Ծրագրի նկատմամբ և որոնք առավելագույնս հարմար են մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխելու կամ նվազագույնի հասցնելու համար՝ հաշվի առնելով սովորական, ոչ սովորական կամ պատահական հանգամանքների հետևանքով աղտոտիչների արտանետումը, ԳՊ 3.8-ի և ԳՊ 3.13-ի համաձայն:

Գործունեության նկատմամբ պահանջ 4. Առողջապահություն և անվտանգություն

Արդյո՞ք Բանկը ձգտել է ապահովել, որ հաճախորդը, որպես իր՝ բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացի մի մաս, հստակեցնի, թե որոնք են ԳՊ 4-ի

համապատասխան պահանջները՝ կոնկրետ փոշու և ուրանի ռիսկերի հետ կապված, որոնց մասին պնդում են Դիմումատուները, և ինչպես կարող են դրանք կառավարվել՝ որպես Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) գործընթացի և ծրագրի՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՍԿՊ) մի մաս, ինչպես նախատեսված է ԳՊ 1-ում:

Արդյո՞ք Բանկն ապահովել է, որ հաճախորդը ազդակիր համայնքներին տրամադրի բավարար տեղեկատվություն, ուղղորդում և ուսուցում՝ կապված առողջության և անվտանգության համար վտանգների, ռիսկերի և այլնի հետ, որոնք անհրաժեշտ են նրանց անվտանգության համար ծրագրի ողջ ընթացքում, ԳՊ 4.10-ի և ԳՊ 4.17-ի համաձայն:

Գործունեության նկատմամբ պահանջ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում

Արդյո՞ք Բանկն ապահովել է, որ հաճախորդը՝ գնահատման գործընթացի շրջանակներում, բացահայտի և բնութագրի ծրագրի հետ կապված հնարավորությունները, ռիսկերը և կենսաբազմազանության վրա ազդեցությունները, ԳՊ 6.8-ի համաձայն: Մասնավորապես, այն դեպքերում, երբ հայտնաբերվել են կենսաբազմազանության վրա ծրագրի հնարավոր ազդեցությունները, ինչպե՞ս է Բանկը ապահովել, որ ռիսկերը կառավարվեն ազդեցությունների մեղմման հիերարխիայի և Միջազգային լավագույն փորձի համաձայն և ԳՊ 6.11-ին, ԳՊ 6.12-ին, ԳՊ 6.13-ին և ԳՊ 6.14-ին համապատասխան:

Գործունեության նկատմամբ պահանջ 8. Մշակութային ժառանգություն

Բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացում արդյո՞ք Բանկը համոզվել է, որ Հաճախորդը ներառել է մշակութային ժառանգության հետ կապված համապատասխան պահանջները իր՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանում (ԲՍԳՊ), համաձայն ԳՊ 8.5-ի, ԳՊ 8.8-ի, ԳՊ 8.12-ի և ԳՊ 8.15-ի:

Գործունեության նկատմամբ պահանջ #10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն

Արդյո՞ք Բանկը ողջամիտ ջանքեր է գործադրել՝ հաստատելու, որ խորհրդատվությունների գործընթացը բավարարել է ոչ միայն երկրում ֆորմալ կարգավորող գործընթացի պահանջները, այլև կիրառելի պահանջները, որոնք վերաբերում են շահագրգիռ կողմերի պատշաճ նույնականացմանը՝ ԳՊ 10.9-ի համաձայն, բովանդակալից խորհրդակցություններին՝ ԳՊ 10.18-ի համաձայն և տեղեկությունների հանրայնացման համապատասխան ասպեկտներին՝ ԳՊ 10.16-ի համաձայն:

5.3. Համապատասխանության ստուգման մեթոդաբանություն

Համապատասխանության ստուգումը կիրականացվի 2019թ.-ԾՀՔ-ին համահունչ՝ ինչպես նաև հաշվի առնելով Դիմումի համատեքստը: Համապատասխանության ստուգումը ներառելու է հետևյալ փուլերը.

i. Դիմումի, Բանկի պատասխանի, Հաճախորդի պատասխանի, Գնահատման հաշվետվության և դրա պատրաստման ընթացքում կազմված բոլոր հանդիպումների արձանագրությունների և գրառումների ստուգում,

ii. Հանրային փաստաթղթերի, ինչպես նաև ՎՁԵԲ-ի և Հաճախորդի փաստաթղթերի քննություն,

iii. Ներգրավվածություն Դիմումատուների, Հաճախորդի, ՎՁԵԲ-ի Ծրագրի անձնակազմի (այդ թվում՝ Բանկի Բնապահպանության և կայունության վարչության, Գործառնությունների ղեկավարների, ՎՁԵԲ-ի համապատասխան մշտական ներկայացուցչության և Ծրագրի գնահատման, իրականացման և/կամ մոնիտորինգի մեջ ներգրավված խորհրդատուների) հետ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, այլ շահագրգիռ կողմերի հետ ներգրավվածություն Համապատասխանության ստուգումն իրականացնելու համար՝ հավաքագրելով Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ: Լրացուցիչ տեղեկությունները կարող են հավաքագրվել բանավոր կամ գրավոր հաղորդակցությունների, հանդիպումների, Ծրագրի լրացուցիչ փաստաթղթերի ստացման և ներգրավման այլ մեթոդների միջոցով, ըստ անհրաժեշտության,

iv. տեղայց,

v. լրացուցիչ տեխնիկական փորձաքննության անհրաժեշտության հայտնաբերում և փորձագետների վարձում, եթե առկա են հատուկ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում,

vi. անհամապատասխանության հայտնաբերման դեպքում արվելու են առաջարկություններ՝ նշելով այն փոփոխությունները, որոնք պետք է արվեն ՎՁԵԲ-ի գործելակերպում, ընթացակարգերում, ուղեցույցներում կամ համակարգերում՝ Բանկի համապատասխանությունը վերականգնելու և նման իրավիճակների կրկնությունից խուսափելու նպատակով,

vii. ցանկացած այլ գործողություն, որը կարող է անհրաժեշտ լինել պահանջվող ժամանակացույցի շրջանակներում Համապատասխանության ստուգումը իրականացնելու համար՝ ԾՀԱՄ-ի ղեկավարի հանձնարարությամբ, ըստ անհրաժեշտության:

Համապատասխանության ստուգումը ժամանակին ավարտելու նպատակով ԾՀԱՄ-ը Բանկի ղեկավարությունից պահանջում է իրեն տրամադրել լիարժեք, անարգել մուտք դեպի Բանկի համապատասխան աշխատակազմ և փաստաթղթեր: Բոլոր համապատասխան Կողմերը պետք է ձգտեն կատարել ԾՀԱՄ-ի պահանջները՝ մուտք գործելու դեպի տեղանք,[8] ներկայացնելու գրավոր նյութեր, տրամադրելու

[8] Սա վերաբերում է այն դեպքին, եթե վերացվի COVID-ի պատճառով ՎՁԵԲ-ի կողմից հայտարարված՝ ճանապարհորդությունների մորատորիումը և անհրաժեշտ համարվի մուտք գործել դեպի տեղանքներ Համապատասխանության ստուգման ընթացքում: Այս պահին չի ակնկալվում, որ ՎՁԵԲ-ը կվերացնի Հայաստան ճանապարհորդելու մորատորիումը:

տեղեկություններ և մասնակցելու ժողովներին: Ցանկացած իրավիճակ, երբ որևէ Կողմի գործողությունները կամ գործողությունների բացակայությունը խոչընդոտում կամ հետաձգում են Համապատասխանության ստուգումը, կարող է գրանցվել Համապատասխանության ստուգման հաշվետվությունում:

Համապատասխանության ստուգման գործընթացում ԾՀԱՄ-ի կողմից հավաքագրված ցանկացած տեղեկությունների հասանելիությունը, օգտագործումն ու հանրայնացումը ենթակա են Բանկի՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը և ցանկացած այլ կիրառելի պահանջներին՝ «զգայուն» առևտրային և (կամ) այլ տեղեկությունները գաղտնի պահելու նպատակով: ԾՀԱՄ-ը չի հրապարակի որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն, որը տրամադրվել է գաղտնիության հիմունքներով, առանց այն կողմի հստակ գրավոր համաձայնության, որին պատկանում են այդ փաստաթղթերը:

5.4. Համապատասխանության ստուգման հաշվետվությունը

Համապատասխանության ստուգման ավարտից հետո ԾՀԱՄ-ը պատրաստելու է Համապատասխանության ստուգման հաշվետվություն, որում կներկայացվեն արդյունքները, և որը կներառի հետևյալը.

Ամփոփագիր

1. Գործի ներածական նկարագրությունը
1.1. Դիմումում նշված Ծրագիրը
1.2. Գործի Կողմերը
1.3. Դիմումը

2. Գործի քննության և համապատասխանության ստուգման մեթոդաբանությունը
2.1. Համապատասխանության ստուգման նպատակները
2.2. Համապատասխանության ստուգմանը նախորդող՝ Գործի քննությունը
2.3. Համապատասխանության ստուգման մեթոդաբանությունը

3. Համապատասխանության ստուգման շրջանակը
3.1 Բանկի պարտավորությունները՝ 2014թ. ԲՍՔ-ի ԳՊ-ների կիրառման առումով
3.2 Ծրագրում Բանկի ներգրավվածության նկարագրությունը

4. 2014թ. ԲՍՔ-ին՝ ՎՁԵԲ-ի համապատասխանության վերլուծություն Գործունեության նկատմամբ հետևյալ յուրաքանչյուր պահանջին համապատասխանելու առումով. ԳՊ 1, 3, 4, 6, 8 և 10:

   4.1 Գործունեության նկատմամբ պահանջ (ԳՊ) 1. <u>Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում</u>
   - Կողմերի դիրքորոշումները
   - Քաղաքականությամբ պարտադրվող պարտավորությունները
   - Համապատասխանության ստուգման արդյունքները

4.2 ԳՊ 3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն

- Կողմերի դիրքորոշումները
- Քաղաքականությամբ պարտադրվող պարտավորությունները
- Համապատասխանության ստուգման արդյունքները

4.3 ԳՊ 4. Առողջապահություն և անվտանգություն

- Կողմերի դիրքորոշումները
- Քաղաքականությամբ պարտադրվող պարտավորությունները
- Համապատասխանության ստուգման արդյունքները

4.4 ԳՊ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում

- Կողմերի դիրքորոշումները
- Քաղաքականությամբ պարտադրվող պարտավորությունները
- Համապատասխանության ստուգման արդյունքները

4.5 ԳՊ 8. Մշակութային ժառանգություն

- Կողմերի դիրքորոշումները
- Քաղաքականությամբ պարտադրվող պարտավորությունները
- Համապատասխանության ստուգման արդյունքները

4.6 ԳՊ 10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն

- Կողմերի դիրքորոշումները
- Քաղաքականությամբ պարտադրվող պարտավորությունները
- Համապատասխանության ստուգման արդյունքները

5. Առաջարկություններ (անհամապատասխանության փաստերի հայտնաբերման դեպքում)
   - Ծրագրին վերաբերող առաջարկություններ
   - Ընթացակարգերի/Համակարգերի վերաբերյալ առաջարկություններ

6. Կառավարման գործողությունների ծրագրի մոնիտորինգ (անհամապատասխանության փաստերի հայտնաբերման դեպքում)

ՀԱՎԵԼՎԱ NO ՈՉ: 1 ՊԱՀԱՆ
ՎՁԵԲ-ի՝ Ծրագրերի հետ կապված բողոքների քննության
մեխանիզմի (PCM) տնօրեն՝ [redacted]-ին

Հարգելի [redacted]

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրի ազդակիր համայնքների բնակիչների բողոքը և ցանկանում ենք տեղեկացնել, որ *CEE Bankwatch* ցանցը, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն, «Հայաստանի անտառներ» ՀԿ-ն, «Կանաչ Հայաստան» ՀԿ-ն և «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնությունը սատարում և միանում են բնակիչների այս բողոքին:

Հարգանքով՝

2020թ. մայիսի 19-ը

CEE Bankwatch ցանց
«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ
«Հայաստանի անտառներ» ՀԿ
«Կանաչ Հայաստան» ՀԿ
«Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն

Կից ներկայացված է բողոքի դիմումը (7 էջ)

ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հետ կապված բողոքների քննության
մեխանիզմի (PCM) տնօրեն՝ [redacted]-ին
Ջերմուկ համայնքի
բնակիչներից,
Վայոց ձորի մարզ, Հայաստան

Դիմում

Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի համապատասխանության ապահովման ստուգում անցկացնելու վերաբերյալ

Հարգելի [redacted],

Մենք՝ համայնքի ներքոստորագրյալ բնակիչներս, գտնվում ենք Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրի ազդեցության տակ («Լիդիան» ծրագրի երկարացում/Lydian Extension, 2016, #48579), սույն ծրագիրը առաջ է տանում «Լիդիան ինթերնեյշնլ» ընկերությունը, ծրագիրը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից: Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ միասին դիմում ենք ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ/IPAM), որպեսզի այն նախաձեռնի Բանկի բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը և հաստատված սկզբունքներին Ամուլսար ծրագրի համապատասխանության ապահովման ստուգում:

Ծրագրի կատարողը՝ «Լիդիան ինթերնեյշնլ» ընկերությունը, ունենալով Հայաստանի նախկին կառավարության օգնությունը և ՎԶԵԲ-ի ֆինանսական ու բարոյական աջակցությունը, չի կիրառել միջազգային լավ չափանիշներ՝ ազդեցությունը գնահատելու, ծրագրի ազդակիր անձանց հետ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնելու և տեղի բնակչության կարծիքը հաշվի առնելու համար: Կարծում ենք, որ ՎԶԵԲ-ը՝ որպես «Լիդիանում» ներդրող, չի ապահովել ծրագրի համապատասխանությունը Բանկի բնապահպանական և

սոցիալական քաղաքականության պահանջներին: Արդյունքում ՎԶԵԲ-ին և նրա հաճախորդին՝ «Լիդիան ինթերնեյշնլ» ընկերությանը, չի հաջողվել պատշաճ կերպով պաշտպանել մեր բնությունը (ջուրը, օդը, հողը և վայրի բնությունը), մեր համայնքի առողջությունն ու ապրուստը (պտղատու այգիները, արոտավայրերը, սննդի արտադրությունը) և Ջերմուկ խոշորացված համայնքի 5 բնակավայրի, այդ թվում՝ Ջերմուկ առողջարանի, տնտեսությունը (որը հիմնված է բժշկական, գյուղական և էկո տուրիզմի, ինչպես նաև հանքային ջրերի արտադրության ու մաքուր գյուղատնտեսության վրա):

2014թ.-ին արդեն իսկ ներկայացվել էին բողոքներ ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմին (ԾԲՔՄ/PCM), ինչպես նաև Համաշխարհային բանկի խմբի մեջ մտնող Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականին (ՀԱՊԽ):

ՀԱՊԽ-ը փակել էր բողոքը հետևալ եզրակացությամբ. «ՀԱՊԽ-ի մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ համապատասխանության ապահովման հետաքննությանը ՄՖԿ-ի արձագանքը միայն մասամբ է անդրադարձել համակարգային մակարդակում ստացված տվյալներին, և չի անդրադարձել ծրագրի մակարդակում արված եզրակացություններին: Բայցևայնպես, ՀԱՊԽ-ը որոշել է երկու գործերն էլ փակել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՖԿ-ն այդ ընկերությունում որևէ ընթացիկ ներդրում չունի և որ ՄՖԿ-ն ունի որոշում՝ չմասնակցել ծրագրի մակարդակում որևէ պատասխան գործողությունների իր նախկին հաճախորդի կամ բողոքաբերների հետ»:[9] [10]

ՎԶԵԲ-ի ԾԲՔՄ-ն մեր բողոքները համարել էր վաղաժամ [11] [12], քանի որ այդ փուլում ՎԶԵԲ-ը ներդրում էր արել միայն հետազոտություններում (Ուղղակի ներդրումների ծրագիր՝ Լիդիան/DIF Lydian, 2009, #42182), և դեռ չէր հաստատել հանքարդյունաբերության ծրագիրը (Լիդիան Ամուլսարի ոսկու հանք – Երկարացում/ Lydian Amulsar Gold Mine - Extension, 2016, #48579):[13] Անգամ եթե մեր բողոքի մերժումը ընթացակարգային առումով հիմնավորված էր, դա բաց թողնված հնարավորություն էր՝ անկախ ստուգում անցկացնելու և ազդակիր

---

[9] http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=221

[10] http://www.cao-ombudsman.org/cases/document-links/documents/CAOCompliance_MonitoringReport_Lydian_Armenia-01and02_10022018.pdf

[11] https://www.ebrd.com/downloads/integrity/amulsar_complaint.pdf

[12] https://www.ebrd.com/downloads/integrity/amulsar2_complaint.pdf

[13] https://www.ebrd.com/work-with-us/project-finance/project-complaint-mechanism/pcm-register.html

համայնքների՝ ծրագրի վերաբերյալ դիրքորոշումն ուսումնասիրելու առումով: Այսպիսով, սա նաև բաց թողնված հնարավորություն էր՝ ՎԶԵԲ-ի կողմից համալիր ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու առումով: ԾՀԱՄ-ը կարող է անդրադառնալ թե՛ ԾԲՔՄ-ին ներկայացված բողոքներին, և թե՛ ՀԱՊԽ-ի եզրակացություններին այնքանով, որքանով դրանք առնչվում են ԾՀԱՄ-ի կողմից Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի ստուգմանը:

2018-2019թթ.-ին մի շարք կազմակերպություններ անկեղծ շարժառիթներով ՎԶԵԲ-ին ներկայացրել էին Ամուլսարի ծրագրի հետ կապված խնդիրները բողոք նամակով: Սակայն բանկը չէր դիտարկել այդ խնդիները՝ դիմումատուներից նշելով միայն Հայկական բնապահպանական ճակատը որպես ոչ պատշաճ դիմող: [14] [15]

2018թ.-ի դրությամբ հանքի շինարարական աշխատանքներն առաջ էին գնացել, և ապացուցվեց, որ մեր մտահոգություններից և վախերից շատերը հիմնավորված էին: **Մենք արդեն իսկ ծրագրից կրել ենք լուրջ էկոլոգիական վնասներ՝ ջրի, օդի և հողի աղտոտման արդյունքում:** Մեզ մտահոգում է, թե որքանով է թունավոր ծրագրի տեղանքից տարածվող փոշին: Թեև ըստ «Լիդիանի» ՇՄԱԳ-ի՝ հանքարդյունաբերական գործունեության արդյունքում փոշու ազդեցություն Ջերմուկի վրա չի լինի, հանքի շինարարական աշխատանքների մեկնարկից հետո Ջերմուկում գրանցվեց օդի զգալի աղտոտում՝ փոշով: Օրինակ, ձմռանը ձյունը վարդագույն էր դառնում 8 կիլոմետր հեռավորությունից տարածվող փոշու պատճառով: Անձրևներից հետո մեր մեքենաների և տների վրա փոշու շերտ էր նստում, ինչը երբեք տեղի չէր ունեցել նախքան այդ աշխատանքների մեկնարկը: [16]

Ուշագրավ են այն պատահարները, որոնք ազդեցություն են գործել Գնդեվազ բնակավայրի խմելու ջրի, ոռոգման ջրի և ձկնաբուծարանների վրա: 2018թ.-ին գրանցվել է ջրի մատակարարման խաթարման և ջրի աղտոտման մի քանի դեպք, չնայած «Լիդիանը» իր ՇՄԱԳ-ում գրել էր, որ ազդեցության վրա ազդեցությունը կառավարելի է և էական չի լինի:» [17]

---

[14] http://www.armecofront.net/en/news/ebrd-investment-in-lydian-internationals-mining-project-in-amulsar-and-how-it-threatens-the-sustainability-of-the-region/

[15] http://www.armecofront.net/en/amulsar-2/ebrd-renounces-its-liability-in-amulsar-mine-project/

[16] http://www.armecofront.net/amulsar/jermuk/

[17] Հղումներ պատահարների մասին հրապարակումներին. http://www.armecofront.net/amulsar/arpa-river/, https://ecolur.org/hy/news/amulsar/--/10225/, https://ecolur.org/hy/news/amulsar/gndevaz-residents-blocked-roads-running-to-amulsar-and-demanding-to-stop-amulsar-project/10134/

Կան ուսումնասիրություններ, որոնք ցույց են տալիս, որ թթվային դրենաժը կարող է ազդել մակերևութային ջրերի աղբյուրների վրա, ինչպիսիք են Դարբ, Արփա և Որոտան գետերը, դրանց ջրհավաք ավազանների բազմաթիվ աղբյուրները, Կեչուտ և Սպանդարյան ջրամբարները և, ի վերջո, Սևանա լիճը, ինչպես նաև ստորգետնյա ջրերը:[18] [19] [20] [21] [22] [23]

Գնդեվազի ծիրանի այգիների սեփականատերերը զրկվել են ոչ միայն իրենց հողերից, այլ նաև ապրուստից, որի համար պատշաճ կերպով չեն փոխհատուցվել: Հարկ է նշել, որ ՀՀ քննչական կոմիտեն քրեական գործ է հարուցել Գնդեվազի նախկին համայնքապետի կողմից կատարված առերևույթ չարաշահումների դեպքի առթիվ:[24] Բացի այդ, Ձերմուկ առողջարանային քաղաքը լուրջ վնասներ է կրել, օրինակ՝ վնաս է հասցվել նրա վարկանիշին, և քաղաքը բացասական տնտեսական և սոցիալական ազդեցություն է կրել տուրիզմի անկման պատճառով:

Ձերմուկը վերածվել է հանքարդյունաբերական քաղաքի, և դա վնաս է հասցնում քաղաքի՝ որպես հեղինակավոր առողջարանի, համբավին: Տուժել է Ձերմուկի տուրիզմը. մարդիկ չեն ցանկանում գալ՝ մաքուր լեռնային օդ շնչելու և բուժիչ հանքային ջրերով բուժումներ ստանալու մի քաղաքում, որը լի է հանքագործներով, նրանց հանրակացարաններով և ցեխոտ ավտոտրանսպորտային միջոցներով: Մեր համայնքի սոցիալական կերտվածքը խաթարվել է հանքում աշխատողների ներհոսքի պատճառով:

Մեր օդի և առողջության վրա ուրանով աղտոտման ազդեցությունը չի գնահատվել: Հանրությունը տեղյակ է, որ խորհրդային ժամանակաշրջանում մի շարք արշավախմբեր տարածքում հետազոտություններ են իրականացրել և հայտնաբերել ուրանային երևակումներ («Горный журнал», 2007, N 6,[25]):

Ամուլսարի ծրագրի ռադիացիոն ռիսկերի մասին նշված է նաև Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կարծիքի մեջ, որն ուղարկվել

---

[18] http://www.armecofront.net/en/amulsar-2/ebrd-twists-the-findings-of-elard-review-on-amulsar-gold-project/

[19] http://www.armecofront.net/en/amulsar-2/missing-elements-and-underestimation-of-risk-in-lydians-2019-ni-43-101-technical-report-ann-maest-phd-buka-environmental/

[20] http://www.armecofront.net/en/news/amulsar-conclusions-of-international-renown-experts/

[21] https://ecolur.org/files/uploads/pdf/amulsar%20Harut%20Bronzyan/bronozianconsultantsamulsar.pdf

[22] http://investigative.am/images/2019/lidian/porcaqnnutyun/amulsar11.pdf

[23] https://ecolur.org/en/news/amulsar/--elard--/11536/

[24] http://investigative.am/en/news/view/amulsar-hoxataracq.html

[25] http://www.rudmet.com/journal/742/article/10433/?language=en)

է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» Ամուլսարի՝ 2012թ.-ի ծրագրի վերաբերյալ, որը ներկայացվել էր «Գեոթիմ» ընկերության կողմից (ներկայումս «Լիդիան Արմենիա»): Հանձնաժողովի պաշտոնական նամակում, մասնավորապես, նշված է. «*Radman Associates*–ի զեկույցներից երևում է, որ ռադոնի կոնցենտրացիան գերազանցում է 400բեքերել/մետր^3 մակարդակը, սակայն ծրագրի ՇՄԱԳ-ում ոչինչ չի ասվում այն մասին, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկվելու այդ մակարդակը իջեցնելու նպատակով:...»: Սևանա լճի վրա ծրագրի ազդեցության վերաբերյալ Հանձնաժողովը նշել է. «Հիդրոերկրաբանական առանձնահատկությունների շնորհիվ լցակույտի տարածքն ունի գրունտային ջրերի բազմաթիվ ելքեր, և դրանք կտարածեն թունավոր նյութերը լցակույտից դեպի Որոտան գետը, այնուհետև՝ Որոտան-Արփա թունելով, դեպի Սևանա լիճ»:

Գնահատելով Ամուլսարի ծրագրի ռիսկերը՝ Հանձնաժողովը տվել էր բացասական եզրակացություն: Ավելի ուշ՝ 2014թ.-ին, Սևանի Հանձնաժողովի կազմի փոփոխվելուց հետո, այն դրական եզրակացություն տվեց Ամուլսարի ծրագրին: Հանձնաժողովը հրաժարվեց հանրությանը տրամադրել իր դրական եզրակացությունը:

Ջերմուկի քաղաքացիների կարծիքը հաշվի չի առնվել: Ծրագրի ՇՄԱԳ-ի վերաբերյալ պատշաճ հանրային լսում և քաղաքացիների հետ քննարկումներ չեն անցկացվել: Գտնվելով նախատեսվող հանքից գրեթե նույն հեռավորության վրա, ինչ մյուս ազդակիր համայնքները, տարածաշրջանի ամենաբնակեցված քաղաքի՝ Ջերմուկի բնակիչները զրկված են եղել իրենց հարազատ քաղաքի ապագայի վրա լրջագույն ազդեցություն ունեցող ծրագրի մասին կարծիք հայտնելու իրավունքից: Թեև 2016թ.-ին Ջերմուկը ներառվեց որպես ազդակիր համայնք, քաղաքում չանցկացվեցին օրենքով սահմանված կարգով քննարկումներ: Ջերմուկ առողջարանային քաղաքի, Գնդեվազ և Կեչուտ բնակավայրերի վրա ազդեցությունները պատշաճ կերպով չեն գնահատվել «Լիդիանի» և ՎՁԵԲ-ի կողմից:

2018թ.-ին Ջերմուկում «Ջերմուկ համայնքը էկո-տնտեսական տարածք հայտարարելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու մասին» կոլեկտիվ հանրագիրը 3000 ստորագրություն էր հավաքել: Այդ 3000 ստորագրությունները հավաքվել էին ընդամենը 5 օրում, ինչը վկայում է մետաղական հանքարդյունաբերության արգելքին լայնորեն աջակցելու և

Ամուլսարի ծրագրին լայնամասշտաբ ընդդիմանալու մասին: «Լիդիանը» իր գործունեությունը ծավալելու համար չունի Ջերմունի համայնքի հանրային համաձայնությունը: 2018թ.-ի դեկտեմբերի 18-ին Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանին հավանություն է տվել հանրագրին (Համայնքային խորհուրդ, Որոշում N 88-Ա, թվագրված է, կից ներկայացված է):[26]

Ասպիսով, խախտվել է համայնքի և մեր բարեկեցության ապահովման համար տուրիզմը զարգացնելու մեր իրավունքը՝ ծրագիրը վնասակար կլինի պատմամշակութային տուրիզմի համար, որովհետև կոչնչացվի պատմամշակութային ժառանգությունը (տե՛ս հուշարձանների ոչնչացման մասին հավելվածը): Կտուժի նաև էկոտուրիզմը (տե՛ս կարմիրգրքյան տեսակների և Բեռնի կոնվենցիայով պաշտպանվող տեսակների անհետացման ռիսկերի մասին հավելվածը):

Մենք՝ Ջերմուկի բնակիչներս, մտադիր էինք հայտարարել այդ ռիսկերի մասին Ջերմուկում հանրային լսումների ժամանակ, որոնք նախատեսվում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքով, սակայն տեղի չունեցան, թեպետ Ջերմուկը ճանաչվեց ազդակիր համայնք: Լսումներն անցկացվեցին Ջերմուկ խոշորացված համայնքի փոքր գյուղերում, և «Լիդիանը» հայտարարեց, որ նրանք հետևել են օրենքին և անցկացրել են հանրային լսումներ, այն դեպքում, երբ իրականում Ջերմուկ առողջարանային քաղաքում լսումներ չեն անցկացվել և մեր՝ Ամուլսարի ծրագրի վերաբերյալ հանրային լսումներին մասնակցելու իրավունքն անտեսվել է:

Մենք ցանկանում ենք, որ մեր շրջակա միջավայրը և սոցիալական վիճակը բարելավվեն, և ոչ թե վատթարանան ազդեցությունների արդյունքում: Մենք ցանկանում ենք, որ վերականգնվի մեր ապրուստը և մեր բնական ռեսուրսների հիման վրա զարգանա տուրիզմը: Մենք ցանկանում ենք, որ կյանքի որակը բարձր լինի՝ մաքուր և առողջ միջավայրում: Մենք պայքարում ենք մեր իրավունքի վերականգման համար, որպեսզի իրավունք ունենանք հայտնելու մեր դիրքորոշումը մեր համայնքների ապագայի վերաբերյալ:

Մենք կոչ ենք անում ԾՀԱՄ-ին. առաջարկել ՎՋԵԲ-ին դուրս գալ Ամուլսարի ծրագրից, ինչը պատասխանատու քայլ կլինի, որը համահունչ է Բանկի բնապահպանական և սոցիալական քաղաքականության պահանջներին.

[26] http://jermuk.am/Pages/DocFlow/default.aspx?a=v&g=cc4fe3b5-9c3e-4cb2-bbd5-918aa9bc45c2

Գործունեության նկատմամբ պահանջ 1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության գնահատում և դրա կառավարում

Գործունեության նկատմամբ պահանջ 3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն

Գործունեության նկատմամբ պահանջ 4. Առողջապահություն և անվտանգություն

Գործունեության նկատմամբ պահանջ 6. Կենսաբազմազանության պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում

Գործունեության նկատմամբ պահանջ 8. Մշակութային ժառանգություն

Գործունեության նկատմամբ պահանջ 10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն՝ խուսափելու հետագա լուրջ և անդառնալի վնասից և վերականգնելու Ջերմուկի բնակչության հանդեպ արդարությունը:

Աշխարհը նոր մարտահրավերների առջև է կանգնած, և մարդու առողջությունն ու կյանքը առողջ շրջակա միջավայրում դառնում են սկզբունքային, ինչի մասին վկայում են խոշորագույն կազմակերպությունների հայտարարած դիրքորոշումները: Մենք վստահ ենք, որ ՎՁԵԲ-ը, լինելով զարգացման ոլորտի խոշորագույն ֆինանսական հաստատություններից մեկը, հաշվի կառնի մեր բողոքը, կուսումնասիրի մեր կողմից այստեղ բարձրացված խնդիրները և որոշում կկայացնի ի օգուտ Ջերմուկի բնակիչների:

ԾԲՔՄ-ն այս տեքստից հեռացրել է Ծրագրի ազդակիր անձանց ցանկը և ստորագրությունները՝ գաղտնիության նկատառումներով:

ՎՁԵԲ-ի ղեկավարության պատասխանը ԾՀԱՄ-ին

ՀԱՎԵԼՎԱ NO ՈՉ: 2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

ԴԻՄՈՒՄ. Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում

ԴԻՄՈՒՄ ԹԻՎ 2020/02

2020թ.-ի սեպտեմբերի 7-ը

1 ՎՁԵԲ-Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ներածություն

Ղեկավարության այս պատասխանը պատրաստվել է 2020 թվականի օգոստոսով թվագրված՝ ԾՀԱՄ-ի գնահատման հաշվետվությունից հետո, որը եզրակացնում է, որ *Գնահատման հաշվետվության արդյունքների հիման վրա խորհուրդ է տրվում Դիմումը փոխանցել Համապատասխանության ստուգման գործառույթին՝ համաձայն ԾՀԱՄ-ի Քաղաքականության 2.6. պարբերության, որպեսզի այն անցնի գնահատում ըստ Համապատասխանության ստուգման համար անհրաժեշտ սահմանված չափանիշների:*

Ղեկավարության այս պատասխանը պարունակում է ծրագրի ամփոփ նկարագրությունը, Դիմումի ամփոփագիրը, ծրագրում ՎՁԵԲ-ի ներգրավվածության մանրամասն ժամանակագրությունը, ՎՁԵԲ-ի պահանջները բավարարելու համար ծրագիրը կազմելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, և, ամփոփելով՝ Դիմումի յուրաքանչյուր կետին ղեկավարության պատասխանը: ՎՁԵԲ-ի ղեկավարության կողմից ԾՀԱՄ-ին տրամադրվել է տեխնիկական փաստաթղթերի համապարփակ փաթեթ՝ ղեկավարության այս պատասխանը հիմնավորելու նպատակով: ՎՁԵԲ-ի ղեկավարությունը պարտավորվում է լիարժեք համագործակցել ԾՀԱՄ-ի հետ այս ստուգման ամբողջ ընթացքում:

1.2 Ծրագիրը

2016թ.-ի հուլիսին ՎՁԵԲ-ը հաստատել էր 11.4 միլիոն կանադական դոլար գումարի չափով ներդրում, որպեսզի պահպանի իր՝ փոքրամասնության բաժնետոմսերը ցուցակված հանրային ընկերությունում, որի բաժնետոմսերի առքուվաճառքն իրականացվում էր Տորոնտոյի ֆոնդային բորսայում, և որը

գործում է Հայաստանում: Ներդրումը տրամադրվել էր որպես մասնակցություն բաժնետրիական կապիտալին՝ Lydian International Limited-ի («Հաճախորդ» կամ «Ընկերություն») կապիտալից լրացուցիչ բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով՝ հնարավորություն տալով Բանկին պաշտպանել առկա բաժնետոմսերը «նոսրացումից»: Այս եղանակով տրամադրված ֆինանսավորումը հատկացվել էր Ընկերության կողմից ձեռնարկված՝ Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումների (ԲՍԱՄՄ-ESMM) ֆինանսավորման համար՝ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման հետ կապված Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ-ESAP) առնչությամբ: Ընկերության կապիտալում ներդրումը համալրում է Բանկի ավելի վաղ ներգրավվածությունը Ծրագրի հետազոտման և մշակման փուլում:

Ընկերությունը վարկատուների հետ ուներ վարկի մարման ժամկետի հետաձգման պայմանագիր, որը 2019 թվականի դեկտեմբերին չէր երկարաձգվել, և արդյունքում Ընկերությունը դիմել և ստացել էր Պաշտպանության կարգադրություն Կանադայում, ինչը թույլ էր տվել նրան վերակազմավորել իր բիզնեսն ու ֆինանսական գործունեությունը: Ելնելով վերը նշվածից՝ ընդունվել էր կորպորատիվ վերակազմավորման պլան, որի արդյունքում ակտիվներն այժմ պատկանում են Ընկերության առկա ավագ ապահովված վարկատուներին Lydian Canada, Lydian UK և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում և վերահսկվում նրանց կողմից, իսկ Lydian International Limited ընկերության փակման գործը Ջերսիի իրավասու դատարանում է:

2009 թվականից ի վեր բաժնետիրական կապիտալին մասնակցությունը տրամադրվել է ՎՁԵԲ-ի կողմից բացառապես հետազոտության և ծրագրի նախապատրաստման գործունեության, այլ ոչ թե բուն ծրագրի համար: 2012թ.-ից ի վեր ՎՁԵԲ-ը պահպանել էր փոքրամասնության բաժնետոմսերը մայր ընկերությունում՝ Lydian International-ում, իսկ 2016թ.-ին բաժնետրիական կապիտալին ՎՁԵԲ-ի վերջնական մասնակցության գումարը հստակորեն նախատեսված էր Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում նշված՝ բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումների ֆինանսավորման համար, ներառյալ կենսաբազմազանության փոխհատուցման ծրագիրը և ջրի մաքրման կայանի կառուցումը: Այն ժամանակվանից, երբ 2019թ.-ին Lydian International-ը անվճարունակ դարձավ, ՎՁԵԲ-ը այլևս ֆինանսական կամ իրավական շահագրգռվածություն չունի Ամուլսարի ոսկու հանքի ծրագրում, քանի որ այն պատկանում է Կանադայի Lydian Ventures-ին, որում ՎՁԵԲ-ը բաժնետեր չէ:

1.3 Բողոքը

2020թ.-ի մայիսի 19-ին ստացել ենք Դիմում, որը կապված էր *Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում* Ծրագրի հետ: Դիմումը համատեղ

ներկայացվել և ստորագրվել է տեղի քսաներեք բնակիչների, տարածաշրջանային ՔՀԿ՝ CEE Bankwatch Network-ի, և տեղական չորս ՔՀԿ-ների կողմից. (i) «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, (ii) «Հայաստանի անտառներ» ՀԿ, (iii) «Կանաչ Հայաստան» ՀԿ և (iv) «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն:

Դիմումատուները պնդում են, որ Բանկը չի հետևել իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը և տեղեկությունների հանրայնացման պահանջներին: Ստորև ամփոփում ենք Դիմումատուների և ՔՀԿ-ների կողմից առաջ բերված մտահոգությունները.

- Գործունեության նկատմամբ պահանջ 1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկի 5 բնակավայրերի ջրի, օդի, հողի, վայրի բնության, համայնքի առողջության և կենսամիջոցների վրա,
- Գործունեության նկատմամբ պահանջ 3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրն առաջացրել է օդի աղտոտում փոշով և ազդել ջրամատակարարման վրա, ինչը նպաստել է խմելու և ոռոգման ջրի, ինչպես նաև Գնդեվազի ձկնաբուծարանների աղտոտմանը,
- Գործունեության նկատմամբ պահանջ 4. Առողջապահություն և անվտանգություն - Դիմումատուները պնդում են, որ ուրանի առկայության հետևանքով աղտոտումը և ծրագրի վայրից արտանետվող փոշին կարող են ազդել բնակիչների առողջության վրա,
- Գործունեության նկատմամբ պահանջ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը, հավանաբար, ազդել է Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ-IUCN) կարմիրգրքյան տեսակների և Բեռնի կոնվենցիայով պաշտպանվող տեսակների վրա,
- Գործունեության նկատմամբ պահանջ 8. Մշակութային ժառանգություն - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա՝ դրանով իսկ վնասելով քաղաքի հեղինակությանը որպես հայտնի առողջարանային կենտրոն, և վերջինը.
- Գործունեության նկատմամբ պահանջ 10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն - Դիմումատուները պնդում են, որ տեղական ՇՄԱԳ գործընթացի շրջանակում իրականացվող հանրային քննարկումների ընթացքում Ջերմուկի համայնքի հետ խորհրդակցություններ չեն անցկացվել:

Դիմումի մեջ պահանջվում է, որ այս Գործի նկատմամբ կիրառվի ԾՀԱՄ-ի՝

Համապատասխանության ստուգման գործառույթը:

1.4 ՎՁԵԲ-ի ղեկավարության պատասխանը

Սույն հուշագիրը ներկայացնում է ՎՁԵԲ-ի ղեկավարության պատասխանը բողոքի յուրաքանչյուր կետի վերաբերյալ՝ ներկայացնելով որոշումների կայացման հիմնավորում և օժանդակող տեղեկություններ բողոքի յուրաքանչյուր բաղադրիչի վերաբերյալ:

Ղեկավարության սույն պատասխանի հետևյալ բաժինները մանրամասն նկարագրում են ծրագրի ժամանակագրությունը և ՎՁԵԲ-ի ներգրավվածությունը՝ ներկայացնելով ԲՍԱԳ-ի մշակման կարևոր համատեքստը, որի հիման վրա ՎՁԵԲ-ը հետագայում որոշումներ էր կայացնում: Հետևելով այս ժամանակագրությանը՝ մանրամասն անդրադարձ է արվել Դիմումի յուրաքանչյուր բաղադրիչին:

Քանի որ ԲՍԱԳ-ի նախապատրաստման գործընթացը երկար և բարդ է եղել, ՎՁԵԲ-ի ղեկավարությունը տրամադրել է մեծ թվով հիմնավորող փաստաթղթեր, որոնք պետք է ընթերցվեն ղեկավարության այս պատասխանի հետ համատեղ:

2 ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Նախապատմությունը

Wardell Armstrong International (WAI)-ին հանձնարարվել է հանդես գալ որպես Lydian International-ի Բնապահպանական և սոցիալական հարցերով խորհրդատու (Սեփականատերերի՝ ԲՍ հարցերով խորհրդատու)՝ Ամուլսարի ոսկու հանք կոչվող ոսկու նոր հանքավայրի համար Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (ԲՍԱԳ) պատրաստելու մանդատով: Սեփականատերերի ԲՍ խորհրդատուին տրված հանձնարարականը մեկնարկեց 2007թ.-ին, ՎՁԵԲ-ի և ՄՖԿ-ի կողմից նախնական ներդրումից հետո՝ ֆինանսավորելու Lydian-ի հանքային ռեսուրսների հետազոտությունը և դրա հետ կապված իրագործելիության ուսումնասիրությունները Հայաստանում (ինչպես նաև Կոսովոյում և Թուրքիայում): Սա ՎՁԵԲ-ի առաջին ներգրավվածությունն էր, որի արդյունքում նշանակվեց համապատասխան որակավորում ունեցող անկախ խորհրդատու՝ կազմելու ԲՍԱԳ-ը ՎՁԵԲ-ի՝ Գործունեության նկատմամբ պահանջներին համապատասխան: Բացի այդ, ՎՁԵԲ-ը հաճախորդից պահանջեց մեծացնել ԲՍ գործառույթի հզորությունը և կարողությունները հաճախորդի կազմակերպության ներսում:

Սեփականատերերի ԲՍ խորհրդատուն շարունակաբար ներգրավված է եղել ԲՍԱԳ-ի պատրաստման և կառավարման գործընթացում մինչև 2016թ., ներառյալ հրապարակայնացումը: Ստորև ամփոփված է ԲՍԱԳ-ի նկատմամբ մոտեցումը հետազոտությունների, իրագործելիության ուսումնասիրությունների և ԲՍԱԳ-ի պատրաստման ընթացքում

(հանրայնացվել է որպես 10-րդ տարբերակ 2016թ. հուլիսին): Բոլոր հիմնավորող ուսումնասիրությունները տրամադրվել են ԾՀԱՄ-ի գրասենյակին, և դրանք համալրում են ստորև բերված՝ ԲՍԱԳ գործընթացի և ՎՁԵԲ-ի հիմնական որոշումների կայացման մանրամասն նկարագրությունը:

ՎՁԵԲ-ը ակտիվորեն մշտադիտարկել է վաղ շրջանում տեղանքում իրականացվող գործունեությունը, հետազոտությունների փուլում ԲՍ ռիսկերի և ազդեցությունների կառավարումը, 2007-2015թթ.-ի ժամանակահատվածում ԲՍԱԳ-ի նախապատրաստումը և ծրագրի շինարարական աշխատանքները մինչև 2018թ.-ին տեղանքի շրջափակումը և փակումը: Հետևապես, ՎՁԵԲ-ը երկար ժամանակ համագործակցել է ընկերության և ծրագրի հետ, զգալի ռեսուրսներ է ներդրել ծրագրի վերահսկողության մեջ, և ՎՁԵԲ-ի պահանջները կենտրոնական են եղել ծրագիրը կազմելու փուլում, որպեսզի այն ի սկզբանե համապատասխանի միջազգային լավագույն փորձին:

Նշանակվել է վարկատուի՝ ԲՍ հարցերով խորհրդատու՝ ԲՍԱԳ-ի (10-րդ տարբերակի) մանրամասն վերլուծությունը տրամադրելու, ԲՍԳԾ կազմելու և շինարարության ամբողջ փուլում գործողությունները վերահսկելու նպատակով: Վարկատուի ԲՍ խորհրդատուի հաշվետվությունների ամբողջական փաթեթը տրամադրվել է ԾՀԱՄ-ի գրասենյակին, և դրանք համալրում են ղեկավարության այս պատասխանը: ՎՁԵԲ-ի՝ Հանրային տեղեկատվության քաղաքականությանը համապատասխան, այս փաստաթղթերը չեն հանրայնացվում, բայց դրանք տրամադրվել են ԾՀԱՄ-ին՝ համապատասխանության ստուգմանն աջակցելու նպատակով:

Ժամանակացույց

Ամուլսարում գտնվող ոսկու հանքավայրի հետազոտության լիցենզիան տրվել էր 2006թ. և սահմանում էր տեղանքների հետազոտությունն ու հանքի վերաբերյալ իրագործելիության նախնական ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով պահանջվող ֆինանսավորումը ստանալու համար անհրաժեշտ պահանջները (տե՛ս Աղյուսակ 1-ը): Ստորև նշված բոլոր փաստաթղթերը տրամադրվել են ստուգման համար.

Աղյուսակ 1. Հետազոտության համար լիցենզիայի տրամադրումից մինչև ԲՍԱԳ-ի հանրայնացումն ընկած ժամանակահատվածը		
Տարի	Ամիս	Փաստաթուղթ
2006	Հոկտեմբեր	Տրվել է Ամուլսարի հետազոտության լիցենզիան:
2007	Մայիս	Միջազգային Ֆինանսական Կորպորացիան (ՄՖԿ) տեղայց է կատարել՝ գնահատելու նախնական ներդրումները (Կոսովոյի տեղանքները և Ամուլսարի տեղանքը), Տեղեկությունների հանրայնացում (Բնապահպանական և սոցիալական ստուգման ամփոփագիր (ESRS) և Առաջարկվող ներդրումների ամփոփ նկարագրություն (SPI)):
2008	Հունվար	Lydian-ը ցուցակված է Տորոնտոյի ֆոնդային բորսայի (TSX) հիմնական բաժնում:

2009	Հունվար	ՄՖԿ-ն / ՎՀԵԲ-ը պատրաստում են ԲՍԳԾ-ի (ESAP) թարմացում:
	Փետրվար	Նախնական պաշարները հաստատվել են Հանքային պաշարների գործակալության կողմից:
	Մարտ	Տեղեկությունների հանրայնացում (Բնապահպանական և սոցիալական ստուգման ամփոփագիր (ESRS) և Առաջարկվող ներդրումների ամփոփ նկարագրություն (SPI):
	Մայիս	ՎՀԵԲ-ի առաջին մասնակցությունը ընկերության բաժնետիրական կապիտալում՝ հետազոտություններին ու մշակմանը աջակցելու նպատակով (հորատման և տեխնիկատնտեսական (իրագործելիության) ուսումնասիրություններ)
	Օգոստոս	ՄՖԿ-ն / ՎՀԵԲ-ը թարմացնում են ԲՍԳԾ-ն (ESAP)
2010	Մայիս	WAI ընկերությունը իրականացնում է ԲՍԱԳ-ի GAP վերլուծություն (բացերի վերլուծություն)
	Հունիս	Տեղայց և խորհրդատվություն, որը գլխավորում է Geoteam-ը (Lydian International):
	Նոյեմբեր	ՄՖԿ-ն / ՎՀԵԲ-ը պատրաստում են ԲՍԳԾ-ի (ESAP) հետագա թարմացում:
2011	Փետրվար	WAI- ի կողմից պատրաստված՝ Նախնական ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվությունը հանրայնացվել է, մշակվել է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը, որում ընդգրկել են Ջերմուկի հինգ բնակելի համայնքները:
	Մայիս	Նախնական ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվություն:
	Հուլիս	ՎՀԵԲ-ի մասնակցությունը ընկերության բաժնետիրական կապիտալում՝ հետազոտություններին և մշակման աշխատանքներին շարունակական աջակցություն ցուցաբերելու նպատակով:
	Օգոստոս	Թողարկվել է Ծրագրի տեխնիկատնտեսական (իրագործելիության) նախնական ուսումնասիրությունը:
	Նոյեմբեր	Ծրագրի թարմացման վերաբերյալ խորհրդատվություն (ներառյալ դեմ առ դեմ հարցազրույցները) WAI-ի գլխավորությամբ:
2012	Հունվար	Շահագրգիռ կողմերի մտահոգությունները. WAI-ի կողմից պատրաստված ամփոփ հաշվետվությունը:
	Հունվար	Փորձագետի հաշվետվությունը, որում դիտարկվում են Նախնական ուսումնասիրության վերաբերյալ խորհրդակցության ընթացքում բարձրացված կոնկրետ մտահոգությունները: Պատրաստված է WAI- ի կողմից:
	Հունիս	Տեղական խորհրդատվություններ և փաստերի հավաքագրում WAI-ի գլխավորությամբ:
	Հունիս	Lydian Interntational-ի կողմից կազմակերպված խորհրդատվություն ԲՍԱԳ-ի և ՇՄԱԳ-ի վերաբերյալ՝ WAI- ի կողմից ներկայացված ԲՍ տեղեկությունների հիման վրա:

	Օգոստոս	Փոշու արտանետումների և կույտային տարրալվացման արդյունքում ջրի որակի համար ռիսկերի գնահատում՝ պատրաստված է Golder Associates (GA)-ի կողմից:
	Օգոստոս	Ամուլսարի ծրագրի հնարավոր ազդեցությունները Սևանա լճի վրա: Հաշվետվությունը պատրաստել է Golder Associates-ը (GA):
	Սեպտեմբեր	Հրապարակվել է Բանկի առաջին տեխնիկատնտեսական (իրագործելիության) ուսումնասիրությունը
	Սեպտեմբեր	Lydian International- ը հանրայնացնում է WAI- ի կողմից պատրաստված՝ Ամուլսարի ԲՍԱԳ-ը (տարբերակ 7, վերանայված)
	Սեպտեմբեր	Ծրագրի նախագծումը պահանջում է մանրակրկիտ վերանայում, քանի որ կան Գործունեության նկատմամբ պահանջ 6-ին համապատասխանելու հետ կապված մտահոգություններ, որոնք հիմնված են ընթացիկ ելակետային ուսումնասիրությունների վրա: Իրավիճակը քննարկվում է վարկատուների հետ:
2013	Հուլիս	Վարկատուները նամակ են ուղարկում Lydian- ի ղեկավարությանը ԲՍ կատարողականի, ինչպես նաև հետազոտական գործունեության ընթացքում ունեցած ազդեցության վերաբերյալ:
	Օգոստոս	Lydian- ը հանրայնացնում է Ամուլսարի ԲՍԱԳ-ը (տարբերակ 8)
	Սեպտեմբեր	Ծրագրի նախագծումը պահանջում է մանրամասն վերանայում, ինչը կապված է Սևանա լիճը պաշտպանող օրենքի հետ, ինչպես նաև այն փաստի հետ, որ հանքի վերամշակման (կույտային տարրալվացման) գտնվելու վայրը Սևանա լճի համար սահմանված՝ փոփոխված անմիջական ազդեցության գոտու ներսում է:
2014	Ապրիլ	ՄՖԿ Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի գրասենյակը (ՀԱՊԽ) ստացել է առաջին բողոքը Գնդեվազի և Ջերմուկի 2 բնակիչներից՝ 9 ազգային հասարակական կազմակերպությունների աջակցությամբ:
	Ապրիլ	ՎԶԵԲ-ի կողմից ընկերության բաժնետիրական կապիտալի ֆինանսավորում՝ մշակմանը նախորդող փուլի և թույլտվություններ ստանալու աշխատանքների համար (ներառյալ մանրամասն ինժեներական, հորատման և բնապահպանական ուսումնասիրությունները)
	Հուլիս	ՄՖԿ Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի գրասենյակը (ՀԱՊԽ) ստանում է երկրորդ բողոքը, իսկ ՎԶԵԲ-ի Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմը (ԾԲՔՄ)՝ առաջին բողոքը Գնդեվազի 150 բնակիչներից:
	Հոկտեմբեր	Թողարկվում է Բանկի թարմացված տեխնիկատնտեսական (իրագործելիության) ուսումնասիրությունը:
2015	Նոյեմբեր	Lydian- ը ավարտում է գործառութային ծախսերի վերլուծության գործընթացը:
	Օգոստոս	Հաշվետվության հրապարակայնացում ԲՍԱԳ-ի 9-րդ տարբերակի վերաբերյալ, որը ներառում է Ջերմուկում խորհրդատվական գործունեություն:
2016	Մայիս	Lydian- ը հանրայնացնում է Ամուլսարի թարմացված ԲՍԱԳ-ը (10-րդ տարբերակ)
	Հունիս	Հայաստանի կառավարությունը հավանություն է տալիս ընդերքօգտագործման իրավունքի փոփոխություններին

	Հուլիս	ՎՁԵԲ-ը հանրայնացնում է ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակը
	Հուլիս	Ավարտված է ԲՍԱԳ-ի վերջնական քննությունը բնապահպանական և սոցիալական հարցերով անկախ Խորհրդատուի կողմից:

	Հուլիս	ՎՁԵԲ-ի Տնօրենների խորհրդը հաստատում է Lydian International-ի կապիտալում 3-րդ մասնակցությունը
	Օգոստոս	ՎՁԵԲ-ի մասնակցությունը ընկերության բաժնետիրական կապիտալում նախատեսված է ԲՍԳԾ-ում նշված ԲՍՄՄ-ների (ESMM) համար, ներառյալ կենսաբազմազանության փոխհատուցման ծրագիրը և ջրի մաքրման կայանի կառուցումը:
	Հոկտեմբեր	Lydian- ը հողային աշխատանքներ է սկսում Ամուլսարում:

Վերոնշյալ ժամանակացույցի ողջ ընթացքում ՎՁԵԲ-ն իրականացրել է նվազագույնս հետևյալը. կատարել է տարեկան տեղայցեր՝ ծրագրի ընթացքը մշտադիտարկելու, ինչպես նաև կատարելու ծրագրի փաստաթղթերի և արդյունքների մանրամասն ուսումնասիրություններ, հրավիրել է սեմինարներ ծրագրի մասնագետների հետ, մասնակցել ընկերության ղեկավարության, խորհրդատուների և արտաքին շահագրգիռ կողմերի շրջանակներում անցկացվող հանդիպումների, ինչպես նաև բազմաթիվ առիթներով մասնակցել շահագրգիռ կողմերի հետ միջոցառումների, այդ թվում՝ Դիմումատուների հետ: Բացի այդ, 2009 թվականից ի վեր Դիմումատուները յուրաքանչյուր տարի բարձրացնում էին Ամուլսարի ծրագրի հարցը ՎՁԵԲ-ի տարեկան ժողովներին:

Մշտադիտարկում

2016թ.-ից մինչև 2019 թվականը, ՎՁԵԲ-ի կողմից ծրագրի հրապարակումից և հաստատումից հետո, ՎՁԵԲ-ի թիմը վարկատուի՝ ԲՍ հարցերով խորհրդատուի հետ համատեղ ձեռնարկել է ընկերության՝ շինարարության վերաբերյալ հաշվետվությունների ամսական ստուգումներ, ծրագրի և ներգրավված կապալառուների եռամսյակային աուդիտներ, կիսամյա տեղայցեր և տարեկան մանրամասն գնահատումներ: Մշտադիտարկման այս միջոցառումներից յուրաքանչյուրը փաստաթղթավորված է և տրամադրվել է ԾՀԱՄ-ի գրասենյակին:

3 ՎԱՂ ՇՐՋԱՆՈՒՄ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ՎՁԵԲ-Ի ԲՍ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ (2007թ.-ից մինչև 2010թ.)

3.1 Բնապահպանական և սոցիալական ստուգման ամփոփագիր (ESRS) – ՄՖԿ-ի կողմից

Ներդրումներին նախորդող՝ Lydian-ի նախնական բնապահպանական և սոցիալական ստուգումը տեղի է ունեցել 2007թ.-ին, իսկ Բնապահպանական և

սոցիալական ստուգման ամփոփագիրը (ESRS) հրատարակվել է ՄՖԿ-ի կողմից 2007թ.-ի մայիսին և առնչվում է Lydian-ի հանքարդյունաբերական շահերին: Ելնելով հետազոտության նկատմամբ պահանջներից՝ ՄՖԿ-ն պարզել է, որ Գործունեության նկատմամբ պահանջ (ԳՊ) 1-ից 4-ը կիրառելի են, որ ապագայում ԳՊ 5-ը և 8-ը կիրառելի կլինեն, և որ ԳՊ 6-ը չի տարածվում կոնկրետ հետազոտությունների փուլի վրա: Հետազոտական փուլի աշխատանքները դասվել են B կարգի և կանխատեսվել է, որ դրանք ունեն սահմանափակ թվով ԲՍ ռիսկեր, որոնք իրենց բնույթով կա՛մ հետադարձելի են, կա՛մ ենթակա են մեղմացման: ՄՖԿ-ի կողմից պատրաստվել է ԲՍԳԾ (ESAP)՝ հետևյալ պահանջներով.

Միջազգային խորհրդատուն պետք է վերահսկի ԲՍ կառավարման և ելակետային աշխատանքները	WAI-ը նշանակվել է որպես ԲՍ խորհրդատու, Golder Associates-ը (GA) նշանակվել է՝ գնահատելու կույտային տարրալվացման և թափոնային ապարի այլընտրանքները: Թափոնային ապարի համար ԲՍԱԳ-ում օգտագործվում է «դատարկ ապար» տերմինը:
Կորպորատիվ ԲՍ Կառավարման համակարգ հետազոտական գործունեության համար, հատկացնել համապատասխան ԲՍ անձնակազմ	Նշանակվել է թիմի ղեկավար և 12 ամիսների ընթացքում պատրաստվել է ԲՍ Կառավարման համակարգի առաջին ստուգումը:

Ամուլսարում ԲՍ ելակետային ուսումնասիրություններ (համապատասխանություն ՀՀ օրենսդրությանը և ՄՖԿ-ի պահանջներին)	Նշանակվել են տեղական խորհրդատուներ՝ նախնական ելակետային ուսումնասիրություններ կատարելու նպատակով:
	Ներքին նշանակում՝ Առողջապահության, շրջակա միջավայրի և անվտանգության (HE&S) թիմ ստեղծելու նպատակով:

Lydian- ի ակտիվների առողջապահական, անվտանգության, բնապահպանական և համայնքային (HSEC) ասպեկտների անկախ աուդիտ, ներառյալ ՇՄԱԳ / Սոցիալական ազդեցության գնահատման պարտավորությունների ստուգումը, ԲՍ Կառավարման համակարգի կիրառումը, տեղանքի վերականգնման ծրագրերը և ազգային օրենսդրությանը և ՄՖԿ-ի պահանջներին համապատասխանության ստուգումը:	
Տարեկան հաշվետվություն առաջընթացի մասին - խորհրդատվություն և համայնքի զարգացում	Գորայք գյուղում ստեղծվել է Համայնքի տեղեկատվական կենտրոն և համայնքի հետ նախնական խորհրդակցությունը կենտրոնացված է եղել այստեղ:

3.2 ՎՁԵԲ-ի մասնակցությունը

3.2.1 2009թ.-ի մայիսին ՎՁԵԲ-ը աջակցություն ցուցաբերեց հետազոտության և մշակման աշխատանքներին, մասնավորապես՝ հորատման և տեխնիկատնտեսական (իրագործելիության) ուսումնասիրություններին՝ մասնակցելով Lydian International մայր ընկերությունում բաժնետիրական կապիտալին: Այն ժամանակ հետազոտական հորատում էր անցկացվել Տիգրանես և Արտավազդես հանքամարմիններն ուսումնասիրելու նպատակով, և 2010/2011 թվականների համար նախատեսվել էր հորատման հետագա և ավելի լայնածավալ ծրագիր՝ ներառելով Էրատոյի և Արշակի հարակից գագաթները: Lydian- ին ներկայացվող՝ ՄՖԿ- ի և ՎՁԵԲ-ի պահանջները հաղորդվել են համատեղ: Դրանք, մասնավորապես, ներառում էին հետևյալը.

- Կենսաբազմազանության նախնական ուսումնասիրությունները նշում են, որ հայտնաբերվել են Հայկական Կարմիր գրքում նշված բույսերի տեսակների, ինչպես նաև գորշ (ասիական) արջի առկայության ապացույցներ: Խորհուրդ էր տրվել ընդլայնել ուսումնասիրությունների շրջանակը՝ ներառելով բոլոր համապատասխան միջազգային ուսումնասիրությունները:
- Հարկավոր է շարունակել մշակել Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը սոցիալական ելակետային գնահատման հետ մեկտեղ՝ ընդլայնելով գոյություն ունեցող ներգրավվածության շրջանակը, որտեղ երկխոսությունը հիմնականում վարվում էր տեղական քաղաքապետերի հետ:
- ՎՁԵԲ-ի կողմից ճանաչվել և հատուկ առաջ է բերվել Ջերմուկը և ծրագրի ազդեցության գոտու բոլոր հինգ շրջանները ներառելու պահանջը:

2010թ.-ից հետո իրականացված վերահսկողության հաշվետվությունները համակարգվել են ՎՁԵԲ-ի՝ ԲՍ պահանջների մշակման հետ, ներառյալ Ծրագրի համար ԲՍԱԳ-ի պատրաստումը և Բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգի նկատմամբ ներքին պահանջները: Այնուհետև սկսվեցին ԲՍԱԳ-ի մշակման սկզբնական փուլերը, ինչպես ներկայացված է այս հուշագրի հաջորդ բաժիններում:

4 ՆԱԽՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ(2011)

4.1 Նպատակը

ՎՁԵԲ-ի ԲՍԳԾ-ն պահանջում էր հրապարակել ԲՍԱԳ-ի համար իրականացված՝ Նախնական ուսումնասիրությունը (scoping study), ինչպես նաև բացերի (GAP) վերլուծությունը՝ ապագայում ԲՍԱԳ-ի ելակետային ուսումնասիրություններն ուղղորդելու համար: Նախնական ուսումնասիրությունը ձեռնարկվել էր միևնույն ժամանակ, երբ անցկացվում էին հիմնական հայտնի հանքամարմինների հետազոտությունները (Տիգրանես և Արտավազդես): Նախնական ուսումնասիրությունը հիմնված էր հանքի պլանի վրա, որը ներկայացված է Պատկեր 1-ում:



Պատկեր 1. Հանքի լիցենզավորված տարածքը, որը նկարագրված է Նախնական ուսումնասիրության մեջ

Հանքի լիցենզավորված տարածքը Գնդեվազի, Գորայքի և Սարավանի վարչական սահմանների մեջ է, և հենց այդ համայնքներն են համարվել խոցելի շրջակա միջավայրի և սոցիալական հնարավոր ազդեցությունների առումով: Նախնական ուսումնասիրության հաշվետվության մեջ նշվում է, որ հետազոտական տարածքը ներառում է Էրատո բարձունքից դեպի հյուսիս ընկած հատվածը, Էրատո բարձունքը և հարակից տարածքները, Տիգրանեսը, Արտավազդեսը և Արշակը, և յուրաքանչյուր բարձունքի գագաթը պատկերված է որպես հանքի լիցենզավորված տարածքի մի մաս (տե՛ս Պատկեր 1-ը):

Նախնական ուսումնասիրության հաշվետվության մեջ սահմանված՝ բարձր առաջնահերթություն ունեցող խնդիրները ներկայացված են Աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2. Բարձր առաջնահերթություն ունեցող խնդիրները, որոնք ներկայացված են Նախնական ուսումնասիրության հաշվետվության մեջ(2011)		
Կետ	Բարձր առաջնահերթություն ունեցող բնապահպանական խնդիրները	Բարձր առաջնահերթություն ունեցող սոցիալական խնդիրները
1	Ստորերկրյա ջրերի հիդրոլոգիա և որակ՝ ստորերկրյա ջրերի հատկությունների, բաղադրության և հանքարդյունաբերության հետևանքներն ու փակման հետ կապված խնդիրները պարզաբանող մոդելավորման հետ կապված տեղեկությունների բացակայություն	Տեղական աշխատուժ՝ տեղական գործազրկության բարձր մակարդակ: Իրականացնել հմտությունների աուդիտ՝ առկա տեղական հմտությունների բազան գնահատելու համար: Մտահոգություն կա «ուղեղների արտահոսքի» հավանականության վերաբերյալ՝ երիտասարդ ֆերմերները կարող են անցնել հանքարդյունաբերության ոլորտ
2	Վիզուալ ազդեցություն Ջերմուկի վրա, և ավելի փոքր չափով՝ Կեչուտի, Գորայքի, Սարավանի և ճանապարհի եզրերին գտնվող վայրերի վրա	Բնակչության վերաբերյալ տվյալները - բոլոր տեղական բնակավայրերի բնակչության վերաբերյալ ամբողջական տվյալների բացակայություն
3	Երթևեկություն՝ հանքարդյունաբերական երթևեկության քանակական գնահատում, գոյություն ունեցող ցանցի և արդյունահանման համար ծանր բեռնատար մեքենաների (HGV-ների) պիտանիության գնահատում, արտահանվող հանքաքարի այլընտրանքային երթուղիների դիտարկում և ապրանքներ ներմուծող տրանսպորտի արդիականացում	Գյուղատնտեսություն - անհրաժեշտ են լրացուցիչ տվյալներ տեղական գյուղատնտեսական պրակտիկայի և մեթոդների վերաբերյալ. որքա՞ն է գյուղատնտեսության մասնաբաժինը ներքին եկամտի մեջ
4	Հողերի խախտում և օտարում - Հանքարդյունաբերական գործունեությունը կներառի հողերի օտարում և ընկալվում է, որ պոտենցիալ արոտավայրերի տարածքում կիրառելի կլինի Բնակարանային, հողային և գույքային (HLP) իրավունքը	Արտադրություն - գյուղատնտեսության վերամշակող արդյունաբերության ներկայիս անկում (թռչնամսի և պանրի արտադրություն): Ինչպե՞ս է ծրագիրը նախատեսում կերակրել իր աշխատողներին, այսինքն. արդյո՞ք պահանջարկ կլինի, որպեսզի այս ծառայությունների մատուցումը վերսկսվի
	Այս հողերի կարևորությունը պետք է որոշվի հողօգտագործման գնահատման միջոցով:	
5	Անհրաժեշտ է անցկացնել հետագա ուսումնասիրություններ՝ հետազոտելու շահագործման ազդեցությունը գոյություն ունեցող ենթակառուցվածքների (ջրամատակարարում, գազատար, էլեկտրահաղորդման գծեր և այլն) և հնագիտության տեսանկյունից կարևոր օբյեկտների վրա, անհրաժեշտ է նաև բացատրություն, թե ինչ ազդեցություն են ունենալու վերը նշված հատկությունները հանքի նախագծման սահմանափակումների առումով	Հողօգտագործում - փոխհատուցում ինչպես տեղի (մշտական) բնակիչներին, այնպես էլ սեզոնային / արտագնա աշխատողներին՝ ցանկացած հող օտարելու համար

6	Կենսաբազմազանություն՝ տեղանքի բուսական աշխարհը բազմազան է: Առկա են Կարմիր Գրքում ներառված տեսակներ: Հողերի խախտումը և օտարումը կհանգեցնեն ուղղակի ազդեցությունների: Փոշուց և էկոհամակարգի խախտումներից առաջանալու են անուղղակի ազդեցություններ: Անհրաժեշտ է անցկացնել կենսաբազմազանության դաշտային ուսումնասիրություններ պոտենցիալ խախտումների բոլոր վայրերում՝ ազդեցության գնահատման, հանքի նախագծման, մեղմացման և վերականգնման գործընթացների համար	Կենսաբազմազանություն՝ տեղական բժշկության մեջ օգտագործվող բույսեր. հարկավոր է ապահովել, որ դրանք հաշվի առնվեն զարգացման առաջարկներում: Որքա՞ն տարածք են զբաղեցնում տեղական որսավայրերը:
7	Մակերևութային ջրերի որակի կայունություն՝ հանքարդյունաբերական գործունեությունը պոտենցիալ կարող է ազդել երեք ջրհավաք ավազանների վրա՝ առավելագույն անմիջական ազդեցություն ունենալով Որոտան գետի և դրա հետ կապված վտակների վրա, որոնք սնուցում են Սպանդարյանի ջրամբարը:	Վիզուալ ազդեցություն. Ջերմուկը և Գնդեվազը հանրաճանաչ տուրիստական ուղղություններ են
8	Ստորերկրյա ջրային ռեսուրսները տարածաշրջանում զգայուն են (Ջերմուկ): Ջրային ռեսուրսների մշտադիտարկումն ու կառավարումը հիմնարար նշանակություն կունենան:	Առողջապահություն՝ աշխատողների առողջության ելակետային գնահատումներ, մասնավորապես տուբերկուլյոզի և ՄԻԱՎ-ի մոնիտորինգ և իրազեկության բարձրացում
9	Ցիանիդի կառավարում - Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքի (ICMC) դրույթներին հետևելու պարտավորություն, որի համար պահանջվում են Տեխնոլոգիաներ և կառավարման համակարգեր (TMS) և համապատասխան կառավարման պլան (-ներ)	Տեղական գյուղական ծրագրեր - իրականացվում են 3-ամյա ցիկլով: Ապահովել դրանց ներգրավումը / դիտարկումը ծրագրի պլանավորման և համայնքների ներգրավման ընթացքում՝ զրուցել գյուղապետի հետ, ով հանդես է գալիս որպես տեղական նախագծերի համակարգող
10	Անդրսահմանային խնդիրներ - Լեռնային Ղարաբաղի հարևանությամբ գտնվելն ու կարգավիճակի զգայուն բնույթը կարող է պահանջել ծրագրի հանրայնացում և խորհրդատվություն՝ Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիայի (ESPOO) դրույթների ներքո: ՄՖԿ-ից պահանջվում են հետագա պարզաբանումներ	Ակնկալիքներ - Գորայքն ու Սարավանը ունեն անհիրատեսական մեծ ակնկալիքներ՝ կապված ծրագրի օգուտների հետ - հարկավոր է անդրադառնալ այս հարցին՝ հանրությանը տեղեկացնելով և խորհրդատվություններ անցկացնելով
11	Փակում - փակման հայեցակարգային պլանները կիրառելի են ծրագրի բոլոր փուլերի նկատմամբ՝ սկսած հետազոտական փուլից, եթե որևէ պահի չնախատեսված փակում տեղի ունենա:	Հասարակական կազմակերպություններ - հասարակական կազմակերպությունների ներկայությունն այս տարածքում սահմանափակ է, սակայն անհրաժեշտ է ձգտել և ստեղծել գործընկերային հարաբերություններ համայնքի

4.2 Նախնական ուսումնասիրության գործընթացում բարձր առաջնահերթություն ունեցող խնդիրների սահմանում

2010 թ.-ի հունիսին Սեփականատերերի՝ ԲՍ հարցերով խորհրդատուի կողմից

իրականացվել է տեղանքի զննում և ուսումնասիրություն, որոնք կենտրոնացել են ստորև նշված կետերի վրա. Թվարկված բոլոր ուսումնասիրությունները տրամադրվել են ստուգման համար:

- Կույտային տարրալվացման հարթակ ԿՏՀ - տեղամասի ընտրությունը:
  - տեղամասի ընտրության ուսումնասիրության մեջ ընդգրկվել է 10 տեղանք, մեծ մասը՝ Ամուլսարի լեռնաշղթայից դեպի հարավ-արևելք, Որոտան գետի հովտում:
- դատարկ ապարներ - տեղամասի ընտրությունը: Տեղամասի ընտրությունը առաջին հերթին հիմնված էր տոպոլոգիայի, մետրոլոգիայի ու հիդրոլոգիայի, երկրաբանության, գեոտեխնիկայի ու հիդրոլոգիայի, տարածության ու ենթակառուցվածքների և սոցիալական գործոնների (այդ թվում՝ բնակավայրերի մերձակայության, հողօգտագործման, վիզուալ ազդեցության և մշակութային ժառանգության) գրասենյակային ուսումնասիրությունների վրա:
  - տեղամասի ընտրության ուսումնասիրության մեջ ընդգրկվել է 6 տեղանք, որոնք բաժանվել են ջրահեռացման հետևյալ ավազանների (Որոտանում՝ 4, Արփայում՝ 1 և Դարբում՝ 1):
  - Բոլոր տեղանքները գտնվում են Ամուլսար լեռան վրա, նախընտրելի տեղանքը՝ լեռնաշղթայի գծից դեպի արևելք, Որոտան գետի հովտում:

- Նախնական ուսումնասիրություն

  - 2010/11 թվականների ընթացքում ուսումնասիրությունները կենտրոնացած էին Տիգրանեսի և Արտավազդեսի տարածքում գտնվող հանքաքարի կուտակումների վրա՝ Նախնական ուսումնասիրության հաշվետվության մեջ այս ռեսուրսը նշված է որպես հանքի տարածք:
  - Վիզուալ ազդեցություն. Հիմնական բնակավայրերի (այդ թվում՝ Ջերմուկի) մի շարք լուսանկարչական դիրքերի հիման վրա հայտնաբերվել է, որ վիզուալ ազդեցության առաջնային գոտին գտնվում է ծրագրի ազդեցության տարածքից դեպի հարավ և արևմուտք: Էրատո անունով բարձունքը թաքցնում է հանքարդյունաբերական աշխատանքները և դատարկ ապարները հյուսիսային բնակավայրերի, Ջերմուկի և Կեչուտի տեսադաշտից: Գնդեվազը նույնպես թաքնված է լեռան՝ դեպի արևմուտք նայող լանջերի ետևում: Ճանաչվել է Ջերմուկի և Գնդեվազի զբոսաշրջային նշանակությունը և վիզուալ ազդեցության հավանականությունը, սակայն ազդեցությունը համարվել է աննշան:
  - Քննարկում համայնքների ղեկավարների հետ - նշվել են համայնքների ղեկավարների կողմից արձանագրված՝ Գորայքում և Սարավանում ծրագրի օգուտների առումով անիրատեսական մեծ ակնկալիքները:

- Բացերի վերլուծություն

  - Տվյալների ստուգում.

Իրականացվել է բացերի վերլուծություն՝ ԲՍԱԳ-ի ելակետային ուսումնասիրությունների համար տեղեկություններ տրամադրելու նպատակով, և հետագա 12 ամիսների ընթացքում պատրաստվել է ԲՍԱԳ-ը: Այս փուլում բացահանքի հետքը սահմանվել էր Տիգրանես և Արտավադես հանքային մարմինների շրջանակում: Հանքավայրի մնացած ենթակառուցվածքը դեռ պետք է որոշվեր, և դա մասամբ կախված էր ընթացիկ ելակետային ուսումնասիրությունների կարգավիճակից և դատարկ ապարների պահեստավորման (BRS) վայրի այլընտրանքներից, ինչպես նաև Բնակարանային, հողային և գույքային իրավունքի հետ կապված (HLP) ուսումնասիրություններից, որոնք իրականացվում էին WAI- ի և Golder- ի կողմից և որոնց ավարտական հաշվետվությունները պատրսատ էին 2012 և 2009 թվականներին, համապատասխանաբար:

2009թ.-ի նոյեմբերին Lydian International-ը նախաձեռնել էր տեղական համայնքների հետ խորհրդակցություն՝ շահագրգիռ կողմերին ներկայացնելով ՇՄԱԳ հաշվետվությունը, որը կապված էր Տիրգանեսի բացահանքից հանքաքարի արդյունահանման հետ: Հետագա ոչ պաշտոնական խորհրդակցություններ են անցկացվել Գորայքի, Սարավանի և Գնդեվազի համայնքների ղեկավարների հետ՝ ներկայացնելու միջազգային ուսումնասիրություններ իրականացնող՝ WAI թիմը 2010թ. ընթացքում: Ամփոփելով՝ Գորայքի և Սարավանի ներկայացուցիչները շատ մեծ ակնկալիքներ ունեին հանքի շահագործման օգուտների առումով, մինչդեռ խորհրդակցություններից ստացված կարծիքները նաև հաստատեցին, որ զբոսաշրջական ուղղությունները՝ Գնդեվազը և Ջերմուկը կարող են ազդեցություն կրել հանքի շահագործման (վիզուալ ազդեցություն ինչպես Գնդեվազում, այնպես էլ Ջերմուկում) և հողերի օտարման հետևանքով (Գնդեվազում):

Հայտնաբերվել են նաև հովիվներ հետ կապված հնարավոր ազդեցությունները և ամառային ամիսներին բաց լեռնալանջի արոտավայրերի օգտագործման հարցը: Այս խորհրդակցություններից ստացված արձագանքները շարադրված են Նախնական ուսումնասիրության մասին հաշվետվությունում: 2012թ.-ի դեկտեմբերին և 2011թ.-ի ապրիլին թույլատրող թիմը (Lydian International-ը) Ջերմուկում խորհրդակցություն անցկացրեց ՀԿ-ների հետ՝ ներկայացնելու ծրագիրը (հանքի նախագծման պլան) և քննարկելու Ամուլսարում փոշու ազդեցության և ուրանի պաշարների առկայության հետ կապված հնարավոր մտահոգությունները:

4.3 Նախնական ուսումնասիրության վերաբերյալ խորհրդակցություն

2011թ.-ի մայիսին Ջերմուկում, Սարավանում և Գորայքում անցկացվել են խորհրդակցություններ համայնքի հետ, ինչպես նաև հետագա հանդիպումներ քաղաքացիական հասարակության ղեկավարների և հասարակական կազմակերպությունների հետ (Երևանում): Նախնական ուսումնասիրության գործընթացը և մինչ օրս ստացված արդյունքները դիտարկվել են բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունների առաջարկվող շրջանակի հետ մեկտեղ: Կոնկրետ խնդիրները, որոնք բարձրացվել են նախնական ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվությունների ընթացքում, փաստագրվել են Ջերմուկի քաղաքապետին ուղարկված երկու զեկույցներում՝ նպատակ ունենալով լուծել շահագրգիռ կողմերին մտահոգող խնդիրները, ընդ որում, այդ մտահոգությունները հիմնված են փորձագետի զեկույցի վրա՝ հաշվի առնելով փոշու և ուրանի առկայությունը: Այս հարցերը, որոնք հաղորդվել և քննարկվել են խորհրդակցությունների ընթացքում, ամփոփված են հետևյալ աղյուսակներում.

Խնդիր	Մեկնաբանություն
Տնտեսական ներդրում	Զգալի օգուտ տարածաշրջանի և երկրի համար
Աղմուկ	Հաստատվել է, որ կհամապատասխանի միջազգային չափանիշներին
Փոշի	Տեղեկություններ քամու ուղղության, արագությունների և փոշու տարածման մասին
Ջուր	Հանքը և ենթակառուցվածքը հիմնականում Որոտանի ջրհավաք ավազանում են և ելակետային ուսումնասիրությունները կենտրոնանում են այս տեղանքի վրա:
Ռադիոակտիվություն	Սկզբնական մտահոգությունների վերաբերյալ. ելակետային տվյալները հավաքագրվել և գնահատվել են ՄԹ-ում տեղակայված մասնագիտացված խորհրդատուի կողմից, ով պատրաստել է տեխնիկական եզրակացություն՝ նշելով, որ ֆոնային մակարդակների ստացված ցուցմունքները միջազգային բնապահպանական չափանիշներից ցածր են:

Ցիանիդի օգտագործումը	Հաստատվել է ցիանիդի օգտագործումը կույտային տարրալվացման ընթացքում: Հաստատվել է, որ Lydian-ը մտադիր է համապատասխանել Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգրքին (ICMC):
Վիզուալ ազդեցություններ	Տեղանքում կույտային տարրալվացման, դատարկ ապարների պահեստավորման և հանքավայրի այլ ենթակառուցվածքների այլընտրանքների ռազմավարական գնահատումը ներառել է բոլոր համայնքների (ներառյալ Ջերմուկը) վիզուալ գնահատում:

Ելակետային ուսումնասիրությունների աշխատանքների սխեմաները շարունակական են եղել, հիմնական ջանքերը ձեռնարկվել են 2011/12թթ.-ներին: ԲՍԱԳ-ի հրապարակման նախատեսված ամսաթիվը՝ 2012 թվականի աշուն:

4.4 Այլ ուսումնասիրություններ

Ստորև ներկայացված են այլ ուսումնասիրություններ, որոնք դիտարկվում էին, բայց Նախնական ուսումնասիրության մաս չեն կազմել, և հետագա արձագանքը ներկայացված է հետևյալ հաշվետվություններում.

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության վերաբերյալ ելակետային ուսումնասիրությունում առաջընթաց կար, բայց արդյունքները հրապարակվել էին միայն 2012թ.-ին ԲՍԱԳ-ը հրապարակելուց հետո: Ուսումնասիրությունը վկայում է, որ տեղական համայնքի՝ առաջին հերթին Ջերմուկի հիմնական տուրիստական թաղամասի հյուրանոցատերերի հետ խորհրդակցություններ են անցկացվել: Նրանց կողմից վնասների ընկալումը հիմնականում վերաբերում էր շրջակա միջավայրին (ջրի և օդի որակ, վիզուալ ազդեցություն և առողջության վրա ազդեցություն): Որոշ մասնակիցներ նշել էին, որ աշխատողների ներհոսքի և հանքի հետ կապված ներդրումների շնորհիվ կլինեն առևտրի զարգացման հնարավորություններ: Հաշվետվությունը մեջբերվել է ԲՍԱԳ-ի հետագա տարբերակներում, 2013 թվականից հետո:

Խորհրդակցություններ համայնքի հետ (ՇԿՆՊ)

Ի պատասխան շահագրգիռ կողմերի մտահոգությունների, որոնք հայտնաբերվել էին խորհրդակցությունների միջոցով, համայնքների հետ խորհրդատվություններն ընդլայնվել էին, բացի այդ, 2012թ. երկրորդ եռամսյակում ծրագրի տեղեկագիր էր թողարկվել: Քննարկված հարցերի թվում համայնքային ծրագիրն էր, որը կենտրոնացած էր Գորայքի վրա, մի շարք

բնապահպանական միջոցառումների, այդ թվում՝ անտառտնկարկների բարելավման միջոցով, Գորայքը, Գնդեվազը և Սարավանը (ներառյալ Սարալանջը և Ուղեձորը) ճանաչվել են որպես ազդեցության ենթարկված համայնքներ, հայտնաբերված համայնքային խնդիրները հիմնականում ներառում էին վիզուալ ազդեցությունը, փոշին, վիբրացիան, աղմուկը և ջրի որակը:

Միևնույն ժամանակ, հրապարակվել էր հովիվների հետ խորհրդատվությունների նախնական վերլուծությունը՝ ներքին ուսումնասիրության համար, և այն պարունակում էր կարևոր խորհուրդներ առ այն, որ հարկավոր է նշանակել Հանրության հետ կապերի մասնագետ և ավելացնել ռեսուրսները սոցիալական ներգրավման համար, մինչև 5 հոգանոց թիմ կազմել և անցկացնել տեղական անձնակազմի վերապատրաստում: Ջերմուկում ստեղծվեց համայնքային աշխատանքային խումբ և պահանջվեց բարձր մակարդակով համակարգում կառավարության հետ: Կենսամիջոցների վերականգնման ծրագիրն արագացվեց որպես առաջնահերթություն, որի հիմքում ընկած էր համակարգված խորհրդատվական գործընթացը:

4.5 Սեփականատերերի ԲՍ խորհրդատուների կարողությունները

Նախնական ուսումնասիրության մասին հաշվետվությունից պահանջվող ելակետային ուսումնասիրություններն ավարտելու համար ընկերության կողմից նշանակվել էին հետևյալ խորհրդատուները՝ Սեփականատերերի ԲՍ խորհրդատուներին միանալու նպատակով.

Խորհրդ ատու	Ոլորտ	Մեկնաբանություններ
WAI	Օդի որակ	Lydian –ը Գորայքում և հանքավայրի մոտակայքում գտնվող մի քանի վայրերում տեղադրել է մոնիտորինգի սարքեր:
	Աղմուկ	Մի քանի կետային չափումներ են արվել, ոչ մի կոնկրետ մանրամասներ չկան,
	Հողեր	Հողերի տեղական հետազոտություններ, որոնք զուգորդվել են հողի երկրաքիմիական վերլուծության հետ՝ կենտրոնանալով բացահանքի և կույտային տարրալվացման տեղամասի վրա
	Կլիմա	Հետազոտական ճամբարում ստեղծվել է օդերևութաբանական կայան
	Տրանսպորտ	Ելակետային հետազոտություններ և տրանսպորտային երթուղիների տարբերակներ
	Վիզուալ ազդեցություն	Վիզուալ ազդեցության հավանական գոտիներ

GA	Մակերևութային ջրեր Ստորերկրյա ջրեր Հանքի փակումը Այլընտրանքներ/ զգայունության վերլուծություն	Շարունակվում է մակերևութային ջրերի նմուշառումը՝ դատարկ ապարների լցակույտի (WRD) և կույտային տարրալվացման հարթակի (HLF) տեղակայման հիման վրա: Հայտարարվել է տեխնիկական առաջադրանք աղբյուրի ջուրը օգտագործողների շրջանում հետազոտություն անցկացնելու համար, նաև շարունակվում է հանքախոռոչների, դատարկ ապարների լցակույտի և կույտային տարրալվացման հարթակին առնչվող հետազոտությունը Նախանշվել են փակման ծախսերը և փակման ու ռեկուլտիվացիայի պլանի համար պահանջվող ներդրումը Դատարկ ապարների լցակույտի (WRD) և կույտային տարրալվացման հարթակի (HLF) այլընտրանքների գնահատման թարմացում - առաջարկներ GA- ի և այլ վերլուծությունների համար
ERM	Մշակութային ժառանգություն	Գրասենյակային ուսումնասիրություն և տեղում գնահատման ծրագրի մեկնարկ – տեղացի մասնագետներ
TreweekAssociates	Կենսաբազմազանություն, էկոհամակարգեր, ծառայություններ	Բուսական աշխարհի, թռչունների և կենդանական աշխարհի հետազոտությունների ծրագիր: Գարնանը և ամռանը անցկացված ուսումնասիրությունների ընթացքում ձեռք են բերվել կարևորագույն փաստեր (2010). - Տեղական էնդեմիկ Potentila porphyrantha- ի առկայություն՝ մասնավորապես պարզ դարձավ, որ այս տեսակը առկա է եղել տարածքում հետազոտությունների փուլում, - Որոտանի հովտի կարևորությունը չվող և գարնանն ու ամռանը այնտեղ բնակվող թռչունների համար, հովտի գտնվելու վայրը Գորայքի՝ թռչունների և կենսաբազմազանության կարևոր տարածքների (IBA) նկատմամբ: - Հաստատում, որ հանքավայրի հետազոտության լիցենզիայի շրջանակներում գտնվող բնական միջավայրը հարմար է ասիական գորշ արջի համար, և Արշակի հարավում նրանց ձմեռելու դեպքեր են գրանցվել: Կենսաբազմազանության ելակետը փոփոխվել է՝ այն ոչ թե ցածր, այլ չափավոր արժեք ունի կարևորագույն բնական միջավայրի համար:
Liz Wall & Associates	Սոցիալ-տնտեսական	Ելակետային գրասենյակային ուսումնասիրությունը ընդգրկում էր Ջերմուկ, Կեչուտ, Գնդեվազ, Սարավան և Գորայք համայնքները: Լրացուցիչ դաշտային ապացույցներ հովիվների հետ խորհրդակցությունից (հովիվները շարունակում են օգտագործել Ամուլսարի ամառային արոտավայրերը), ինչպես նաև Գորայքում ու Սարավանում տնային տնտեսությունների վրա կենտրոնացված հետազոտություններից: Դրանցից ելնելով՝ համայնքները և Սարալանջն ու Ուղեձորը ներառվեցին ելակետային ուսումնասիրությունների մեջ:

Wardell Armstrong		
Shape	Համայնքի առողջություն և անվտանգություն	Երկրի և տարածաշրջանի տվյալների հավաքագրում. Կոնկրետ խնդիրներ չկան:
Radman Associates	Ճառագայթում	2011 թ.-ին փորձագետների կողմից պատրաստված հաշվետվությանը հաջորդող ուսումնասիրություններ այս փուլում չկան
Lydian	Սևանա լիճ	Սևանա լիճը իրավաբանորեն պաշտպանված է ՀՀ օրենքով, որը տարածվում է անմիջական ազդեցության գոտու և ոչ անմիջական ազդեցության գոտու վրա - Ամուլսարը գտնվում է անմիջական ազդեցության գոտու հարավային սահմանին:

5 ԲՍԱԳ-Ի 7-ՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԸ

5.1 Ելակետային ուսումնասիրությունների իրականացում

Նախնական ուսումնասիրության ժամանակ (2011թ.) իրականացված խորհրդակցություններից հետո համաձայնեցվել է ԲՍԱԳ-ի նախագիծը կազմելու ծրագիրը 2012թ. 4-րդ եռամսյակի համար, և հոկտեմբերին այն ներկայացվել է որպես Տարբերակ 7, որպես մասամբ ավարտված ԲՍԱԳ: Միևնույն ժամանակ ընդունվել են մի քանի կարևոր որոշումներ.

Գործողություն	Մեկնաբանություն

Որոտանի կարևորությունը թռչունների չուի և ամռանը բազմանալու համար	Կույտային տարրալվացման հարթակի ԿՏՀ գտնվելու վայրը հարմար չէ Գորայքի՝ թռչունների և կենսաբազմազանության կարևոր տարածքների (IBA) մերձակայության պատճառով Ըստ առկա ելակետային տվյալների, ԿՏՀ-ն հովտում ավելի հեռու (դեպի հյուսիս) տեղակայելը նույնպես մուտքի, ինժեներական և կենսաբազմազանության առումով խնդիրներ է առաջացնում, հարևանությամբ գտնվում է նաև գործող ՀԷԿ: Հետևաբար, որոշվել է, որ ԿՏՀ-ի գտնվելու վայրը կայուն չէ և չի համապատասխանում Գործունեության նկատմամբ պահանջ 6-ին:
Կրիտիկական նշանակության բնական միջավայր	Potentila porphyrantha- ի և ասիական գորշ արջի առկայությունը զգալի հետևանքներ ունեցան ծրագրի համար. 1. Potentila porphyrantha-ի և ասիական գորշ արջի աշխարհագրական սփռվածության աստիճանը հստակեցված չէր, ուստի պահանջվում էր լրացուցիչ հետազոտական աշխատանքների մի ամբողջական սեզոն: 2. Հանքի տարածքի փոփոխության հետ կապված պետք է որոշվի հետազոտությունների տարածքը:
Գեոտեխնիկական, հիդրոերկրաբանական և հիդրոլոգիական/ջրաբանական/	Դատարկ ապարների լցակույտը (ԴԱԼ) տեղակայված էր մի տարածքում, որտեղ առկա էին գեոտեխնիկական խնդիրներ և ստորերկրյա ջրերի ներթափանցում, բացի այդ, ընդլայնված հետազոտության արդյունքում պարզվել են տակդիր չունեցող՝ Դատարկ ապարների լցակույտի (ԴԱԼ) հետ կապված ռիսկերը և ստատիկ զուտ թթուների արտադրության (Static Net Acid Generation (NAG)) օգտագործման ռիսկերը թթուների արտադրման պոտենցիալ ունեցող ապարների (Potentially Acid Generating rock (PAG)) ինկապսուլյացիայի (պատիճավորման) համար, որն առկա է ԲՍԱԳ-ի 7-րդ տարբերակում ներկայացված նախագծում: ԴԱԼ-ը և դրա հետ կապված ենթակառուցվածքները և Որոտան գետից դեպի Գնդեվազ (Գնդեվազի ջրանցք) ջրամատակարարման գիծը օգտագործվում են գյուղատնտեսության կարիքների համար:

Հետազոտություն	Էրատոյի հանքավայրի միջուկներից ստացված արտադրանքը հաստատեց, որ այդ հանքավայրը պիտանի է, և, հետևաբար, այն ներառվեց հանքի նախագծում - այժմ Տիգրանեսն ու Արտավազդեսը (որոնք միավորված են որպես մեկ գերհանք) և Էրատոն որպես առանձին բացահանք, որտեղ պետք է աշխատանքներ իրականացվեն առանձին հետագա փուլում: Սա թույլ է տալիս հետ լցնել դատարկ ապարների որոշ մասը, բայց ընդհանուր առմամբ մեծացնում է դատարկ ապարների ծավալը:



5.2 Խորհրդատվություն

ԲՍԱԳ-ի 7-րդ տարբերակի մասնակի թողարկումից հետո խորհրդատվություն է անցկացվել Ջերմուկում, Գնդեվազում, Սարավանում, Գորայքում և Երևանում: Կրիտիկական նշանակության խնդիրները, որոնք ազդել են նախագծման և ԲՍԱԳ ուսումնասիրությունների վրա, ներառում են.

- Ջերմուկ համայնքի կողմից բարձրացված մտահոգությունները մի քանի թեմա էին ներառում.
  - Ջերմուկի կարևորությունը զբոսաշրջության, մշակութային և ժառանգության օբյեկտների համար:
  - Ջերմային հանքային աղբյուրները և Ջերմուկի՝ որպես մշակութային կենտրոնի կարևորությունը (բարձրացվեցին հարցեր Ամուլսարի ստորերկրյա ջրերի հետ փոխկապակցման հավանականության մասին):
  - Աշխատողների տեղավորում (հարցն առաջացել է հանքի կամ այլ վայրում ճամբարի առկայության մասին քննարկումների արդյունքում – այս հարցը որոշված չէր ԲՍԱԳ-ի 7-րդ տարբերակում)
- Համայնքների այլ հիմնախնդիրներից են. ջրամատակարարման անվտանգության հարցը (Գնդեվազում), աղմուկը, փոշին և ընդհանուր առմամբ օդի որակը (բոլոր համայնքներում), գույքի հետ կապված բարձրացվել է վիբրացիայի հարցը, երթևեկության և փոխադրումների հետ կապված պոտենցիալ ազդեցությունը, որը հիմնականում կապված է Գորայքի հետ, ինչպես նաև Որոտանի հովիտ տանող ճանապարհի հետ:

6 ԲՍԱԳ-Ի 8-ՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԸ

6.1 Ծրագիրը

Ծրագրի կառուցվածքում որոշ կարևոր փոփոխությունների արդյունքում համապատասխանաբար թարմացվել է ԲՍԱԳ-ը, ստորև ներկայացված են հիմնական փոփոխությունները.

Փոփոխված բաղադրիչը	Պատճառը	Մեկնաբանություն

Հանքավայրի նախագծում ընդգրկվել է Էրատոյի հանքախոռոչը	Բարձր դասի հանքաքար - պոտենցիալ պաշարների ավելացում	Սա տեղանքի հետազոտման ընթացիկ ծրագրի արդյունքն է: Էրատոյի ներառման արդյունքում վայրը ավելի տեսանելի է դառնում Ջերմուկից և Կեչուտից, քանի որ Էրատոյի գագաթը տեսադաշտից թաքցնում էր Տիգրանեսում և Արտավազդեսում տարվող աշխատանքները:
Տիգրանես և Արտավազդես –հանքախոռոչի կազմը	Ավելի խորը շերտերում աշխատելու մեթոդ - պոտենցիալ պաշարների ավելացում	
Արշակը ներառված է տեղանքի հետազոտական	Պարզել դեպի հարավ ոսկու պաշարների չափը	Նշվել է հանքի լրացուցիչ տարածքը
Կույտային տարրալվացման հարթակ	Որոտանի հովիտ և էկոլոգիական տեսանկյունից զգայունություն	Վերանայել ԿՏՀ այլընտրանքների վերլուծությունը. Ընտրված է տեղամաս 14-ը

Դատարկ ապարների պահեստ	Ներկայիս գտնվելու վայրը պիտանի չէ, քանի որ մեծանում է չափսը, և դա զուգորդվում է գեոտեխնիկական և հիդրոլոգիական խնդիրների հետ	Վերանայել դատարկ ապարների պահեստավորման տարբերակները
Հանքավայրի ենթակառուցվածքի գտնվելու վայրի վերաբերյալ ավելի մեծ հստակություն	Մինչ օրս որոշված ընդհանուր վայրերը	Հանքավայրի ենթակառուցվածքների մեծ մասը տեղափոխվում է Ամուլսարի արևելյան կողմից դեպի արևմուտք՝ ավելի մոտ է Ջերմուկին և Գնդեվազին և ավելի հեռու է Գորայքից:
Փոխակրիչներ (Կոնվեյերներ)	Վերգետնյա փոխակրիչի օգտագործումը ջարդիչ կայանից մինչև ԿՏՀ	Նվազեցնում է բեռնատարներով փոխադրման ծավալը և ավելի արդյունավետ է՝ հաշվի առնելով տոպոգրաֆիան:

Վերականգնողական աշխատանքների պլանավորում	2012թ.-ի տարեկան մշտադիտարման շրջանակում կատարված ստուգման ընթացքում հայտնաբերվել է, որ անբավարար ուշադրություն է դարձվել հետազոտության հետ կապված ազդեցությունների վրա, ներառյալ ճամբարից դեպի հետազոտվող տարածքներ և հակառակը անցնելու համար բեռնատար մեքենաների օգտագործումը:	Իրականացվել է վերականգնման և վերակառուցման պլան՝ հողի, բուսականության և ինվազիվ տեսակների համար: ԲՍ կառավարման համակարգի քաղաքանություն և ընթացակարգեր, որոնց պետք է հետևել երթուղայնացվող ուղիների նախագծման ընթացքում



Հանքի ընդհանուր պլանը ԲՍԱԳ-ի 8-րդ տարբերակի համար

Համայնքի հետ խորհրդակցություն

Ծրագրի համայնքային կենտրոն	Տեղակայված է Գորայքում, այժմ կա հրատապ անհրաժեշտություն տեղափոխվելու դեպի այն համայնքներ, որոնք ավելի մեծ ազդեցություն են կրում ծրագրից	Գորայքից տեղափոխվելը (շենքի կորուստ) և հարմար տեղ գտնելը զգայուն թեմաներ են. Համայնքի տեղեկատվական կենտրոնի համար ընտրվել է Գնդեվազը և նշանակվել է տեղական անձնակազմ:
Համայնքի զարգացում	Ծրագրի շրջանակում որոշվելու և իրականացվելու է զարգացման գործողությունների ծրագիր	Հանքի նախագծման փոփոխությունն ազդել է գյուղատնտեսական գործունեություն ծավալելու ներուժի վրա:

Զբոսաշրջություն	Ամուլսարի ստորին լանջերին լեռնադահուկային հանգստավայրի ստեղծման համար ներուժը	Նախաձեռնել իրագործելիության ուսումնասիրություն
Թափոնների կառավարում	Կեչուտի աղբավայրը վատ է հագեցված թափոնների հեռացման համար	Ծրագրի կողմից թափոնների տեղափոխումը դեպի ներկայիս աղբավայր չի համապատասխանում Միջազգային լավագույն պրակտիկային, միևնույն ժամանակ ծրագիրն ունի համայնքին օգուտ բերելու ներուժ՝ կառուցելով ժամանակակից աղբավայր, որը համապատասխանում է աղբավայրերի մասին ԵՄ Հանձնարարականին:

Սևանա լիճ	Խորհրդատվություն էր անցկացվել Սևանա լճի ջրհավաք ավազանի պահպանության վերաբերյալ	Սպանդարյանի ջրամբարից դեպի Սևանա լիճ տանող թունելի և Կեչուտի ջրամբարի հեղեղում, ստորերկրյա ջրերի հետ կապված խնդիրներ, և Սևանա լճի վրա պոտենցիալ ազդեցություն

6.2 Ելակետային ուսումնասիրություններ

ԲՍԱԳ-ի 8-րդ տարբերակի պատրաստման ընթացքում կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները, որոնցից յուրաքանչյուրը տրամադրվել է ստուգման համար:

Կենսաբազմազանություն	Հետագա ելակետային ուսումնասիրություններն անցկացվել են 2013թ.-ի գարնանն ու ամռանը՝ կենտրոնանալով P. porphyrantha-ի առկայության վրա, մասնավորապես, թե որքան հաճախ է այն հանդիպում Էրատոյում, ինչպես նաև քարհանքերի և դատարկ ապարների լցակույտի (ԴԱԼ) միջև տեղափոխման ճանապարհներ վրա: Հետազոտական արշավ՝ տեսակների տեղական և տարածաշրջանային բաշխումը հասկանալու նպատակով: Բազմացող և գիշատիչ թռչունների ուսումնասիրություն՝ ավելի լավ պատկերացում կազմելու լեռնաշղթայի, ինչպես նաև Որոտան, Դարբ և Արփա գետերի հովիտների օգտագործման մասին: Արջերի պոպուլյացիաների գենետիկական պրոֆիլավորում՝ ընտանեկան խմբավորումների քանակը բնութագրելու նպատակով: Հետազոտությունները տարածվել են նաև երկկենցաղների, ջրային (ներառյալ Արփա և Դարբ գետերում) և անողնաշարավոր կենդանիների վրա: Գործունեության նկատմամբ պահանջ 6-ի առումով բնական և կրիտիկական նշանակության կենսամիջավայրի ուսումնասիրությունը գործարկվել է, հայտնաբերվել են կենսաբազմազանությանը վերաբերող մի քանի առաջնահերթ հատկանիշներ:

Ջրային ռեսուրսներ	Դաշտային մոնիտորինգից ստացված տվյալների արագ ընդլայնվող բազա –պահանջներ. ուժեղացնել ԲՍԿՀ-ի (ESMS) կողմից տվյալների վերահսկման և կառավարման պլանավորման նպատակով օգտագործվող ընթացակարգերը: Ստորերկրյա ջրերի փոխազդեցություններ - Ջերմուկի աղբյուրի ջրի և թունելի միացումը Սևանա լճին - մշակվել են մեթոդաբանության և մոտեցման մանրամասները – Ամուլսարի հորատանցքերից և Ջերմուկի աղբյուրի ջրից վերցված նմուշների հիման վրա ստորերկրյա ջրերի իզոտոպային վերլուծությունը եզրակացրեց, որ այդ երկու ստորերկրյա ջրերը տարանջատված են: Թողարկվել է GA- ի կողմից պատրաստված ուսումնասիրությունը:

	Շահագործման և փակման ընթացքում հանքախոռոչի ջրերի հետ կապված խնդիրներ - թափոն հանդիսացող ապարները հետ լցնել բացահանքի խոռոչների մեջ՝ դատարկ ապարների թափոնների ծավալը կրճատելու նպատակով - ազդեցություն ստորերկրյա ջրերի որակի վրա – հարմար մոդելի համաձայնեցում: Հանքի ազդեցությունը այժմ տարածվում է երեք ջրհավաք ավազանների վրա. Որոտան (ջրառ), Արփա (պոտենցիալ արտանետում/ատահոսք) – Կեչուտից հոսանքով դեպի ներքև, ձկնաբուծարանների և գյուղատնտեսական տարածքներից հոսանքով դեպի վերև) և Դարբ (փախչող): Ջրային բալանս – ըստ Որոտանի օդերևութաբանական կայանի, ամբողջ տեղանքում ջրի բալանսի վերաբերյալ տեղեկությունների հուսալիության հետ կապված խնդիրը չի լուծվել: Ջրերի կառավարման գործընթացում ձյան հալման դերը և շահագործման փուլում զրոյական ջրառին հասնելը:
Աղմուկ, փոշի և վիբրացիա	Յուրաքանչյուր համայնքում համաձայնեցվել են մշտադիտարկման կետերը, ինչպես նաև աղմուկի և օդի որակի մոնիտորինգի ավելի երկարաժամկետ ծրագիր: Աշխատանքների մասին հայտարարություն (SoW)՝ գետնի վիբրացիայից հավանական ազդեցություն կրող գույքի կառուցվածքային վիճակի նախնական ստուգման համար:
Սեյսմիկություն	Երկրաշարժի ռիսկի մանրամասն ուսումնասիրություն և դրա ներառումը հանքի նախագծման և առանցքային ենթակառուցվածքների տեղակայման աշխատանքներում:

Հողօգտագործում	ԿՏՀ-ի տեղակայումը ամառային արոտավայրերի տարածքում, որը նաև օգտագործվում է հացահատիկային մշակաբույսերի և ձմեռային կերերի համար (դեզ) - հողերի օտարման, կենսամիջոցների և վերականգնման համար դրա նշանակությունը:
Տրանսպորտ	Մուտքը դեպի հանքավայր այժմ բացառապես H42-ով է - անցած Գնդեվազ համայնքը, որտեղից հնարավոր է մուտք գործել արևմուտքից դեպի հանքավայրի ենթակառուցվածքներ - երթևեկության առաջին մանրամասն ուսումնասիրությունները և ճանապարհի օգտագործման վրա ազդեցությունների դիտարկումը - շինարարություն և շահագործում:
Սոցիալ-տնտեսական	Ավելի մանրամասն ելակետային տեղեկություններ - այժմ կենտրոնացած է Գնդեվազի, Կեչուտի և Ջերմուկի համայնքների վրա (ներառյալ զբոսաշրջության և ժառանգության ասպեկտները), ինչպես նաև այլ արդյունաբերությունների վրա, ինչպիսիք են աղբյուրների ջրի շշալցման գործարանը, հյուրանոցները և ժամանցը, և այլն:
Աշխատանք և կենսամիջոցներ	Ելակետային պայմանների ավելի լավ սահմանում հմտությունների հետազոտություն միջոցով՝ գնահատելու տեղացի աշխատողների համամասնությունը, կենսամիջոցների ավելի ծավալուն ուսումնասիրություններ, այդ թվում՝ սեզոնային հովիվների հարցումներ ենթակառուցվածքների գտնվելու վայրի վերաբերյալ:
Առողջություն, ապահովություն և անվտանգություն	Ելակետային պայմանները ընդլայնվել են՝ տարածվելով առողջապահության, խոցելի դեմոգրաֆիայի և հանքարդյունաբերական գործունեության ու տեղական համայնքների միջև ռիսկերի ընկալման վրա: Ցիանիդի կառավարում – կրիտիկական նշանակության խնդիր, ԿՏՀ-ի մերձավորությունը Գնդեվազին: Հանքի աշխատողների ներհոսք (շինարարություն և շահագործում):
Մշակութային ժառանգություն և հնագիտություն	Ելակետային պայմանները ընդլայնվել են՝ տարածվելով նոր ենթակառուցվածքների վրա

Էկոհամակարգեր	Ալպյան խոտհարքի ստորին և միջին լանջերին խոտաբույսերի և դեղաբույսերի բերքահավաքի կարևորությունը:
Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան	Մինչ օրս ձեռնարկված պաշտոնական հրապարակումներ. Ամուլսարի ՇՄԱԳ հաշվետվության հանրային լսումներ (Տիգրանես բացահանք), 2009թ.-ի նոյեմբեր: Ամուլսարի բացահանքի ոսկու ծրագրի նախնական ուսումնասիրության մասին հաշվետվություն (Scoping report)- Հայաստան, 2011թ.-ի փետրվար: «Խաչաքար» հետազոտական լիցենզիայի վերաբերյալ ՇՄԱԳ-ի հանրային լսումներ, 2011թ.-ի ապրիլ: Նախնական ուսումնասիրության (Scoping study) արդյունքների և ԲՍԱԳ-ի հայեցակարգի, ելակետային պայմանների և հանքի հատակագծի ներկայացում, 2011թ.-ի մայիս: ԲՍԱԳ-ի ներկայացում, ավարտված է ելակետային ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը, հասանելի են իրագործելիության ուսումնասիրությունից ստացված տեղեկությունները հանքի նախագծման, շահագործման առանձնահատկությունների և ժամկետների վերաբերյալ, 2011թ.-ի նոյեմբեր: Հանքաքարի վերամշակման գործողությունների հայեցակարգային նախագծման ՇՄԱԳ-ի վերաբերյալ հանրային լսումներ (ջարդում, փոխակրիչ, ԿՏՀ և ադսորբցիոն-դեսորբցիոն վերականգնման հանգույց ԱԴՎ - ADR), 2011թ.-ի նոյեմբեր ՇՄԱԳ-ի վերաբերյալ երկու հանրային լսում՝ Արտավազդեսի և Տիգրանեսի բացահանքի և դատարկ ապարների լցակույտի վերաբերյալ, 2012թ.-ի մարտ: ՇՄԱԳ-ի հանրային լսում Արտավազդեսի և Տիգրանեսի բացահանքի և դատարկ ապարների լցակույտի վերաբերյալ, 2012թ.-ի ապրիլ: ՇՄԱԳ-ի հանրային լսում Արտավազդեսի և Տիգրանեսի բացահանքի և դատարկ ապարների լցակույտի վերաբերյալ, 2012թ.-ի հուլիս: ՇՄԱԳ-ի հանրային լսում կույտային տարալվացման հարթակի վերաբերյալ, 2013 թ.-ի հուլիս: ԲՍԱԳ-ի ներկայացում, ավարտված է ելակետային ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումը, հասանելի են իրագործելիության ուսումնասիրությունից ստացված տեղեկությունները հանքի նախագծման, շահագործման առանձնահատկությունների և ժամկետների վերաբերյալ, 2013 թվականի հուլիս, Ջերմուկ:

Ստանձնած պարտավորությունների գրանցամատյան	Հանրայնացվել է ստանձնած պարտավորությունների գրանցամատյանը, որը պարունակում է ազդեցությունների մեղմման միջոցառումների սխեմաներ և կառավարման միջոցառումներ:

6.3 Ազդեցության գնահատման 8-րդ տարբերակը և դրա հրապարակումը (2013)

Հիմնական կարևորագույն խնդիրը՝ ԿՏՀ-ի գտնվելու վայրը անմիջական ազդեցության գոտու և Սևանա լճի ոչ անմիջական ազդեցության գոտու նկատմամբ մանրամասն քննարկվել է ԲՍԱԳ-ի 8-րդ տարբերակի նախապատրաստման ընթացքում: Սևանա լիճը դասակարգված է որպես «ռազմավարական նշանակության էկոհամակարգ» և ունի հատուկ կանոնակարգեր, այդ թվում՝ «Սևանա լճի մասին» օրենքը, որը կարգավորում է նրա պահպանումը:

Սպանդայրյանի ջրամբարից մինչև Սևանա լճի թունել երեք կիլոմետր երկարությամբ բուֆերային գոտին, որի ներսում օրենքով արգելվում է հանքանյութերի վերամշակումը, փաստորեն դուրս մղեց տեղամաս 14-ը որպես ԿՏՀ-ի համար կենսունակ տարբերակ (ՀՀ կառավարության՝ 2010թ.-ին ընդունված 143-Ն որոշումը (որը փոփոխում է ՀՀ Կառավարության թիվ 1787 որոշումը) 13-րդ Բաժնում վերաշարադրեց անմիջական ազդեցության գոտու սահմանումը որպես տարածք, որը սկսվում է կենտրոնական գոտում և ձգվում մինչև Սևանա լիճը շրջապատող լեռնաշղթան, և որի մակերեսը կազմում է 364,700 հեկտար: «Սևանա լճի մասին» օրենքը արգելում է անմիջական ազդեցության գոտում հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը):

ԲՍԱԳ-ի 8-րդ տարբերակը հանրայնացվել է կառավարության մակարդակով, և նախագծման ասպեկտները ներկայացվել են տեղական համայնքներին (2013թ.-ի հուլիս), կառավարությանը ներկայացնելու պահին:



ԿՏՀ-ի՝14-րդ տեղամասի գտնվելու վայրը անմիջական ազդեցության գոտու ներսում

7 ԲՍԱԳ-Ի 9-ՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԸ

7.1 Վերանախագծման չափանիշները

ԿՏՀ-ի համար հարմար տեղանքի այլընտրանքները նախնական որոնման չափանիշներից (ջարդիչ կայանից 5 կմ հեռավորության վրա) երկարացվեցին մինչև 10 կմ՝ որոշումը հիմնված էր այն հանգամանքի վրա, որ փոխակրիչի երկարացումը մեծացնում է կապիտալ ծախսերը, բայց գործառնական ծախսերի վրա ավելի քիչ ազդեցություն ունի համեմատած բեռնափոխադրման հետ, և, որ ջարդիչ սարքից տեղափոխման առաջին փուլի համար անհրաժեշտ էր փոխակրիչ՝ տեղագրությունից ելնելով: ԿՏՀ-ի այլընտրանքների վերլուծության համար ընտրվել էր 26-րդ տեղամասը:

Այլ կարևորագույն փոփոխությունները ներառում էին հետևյալը.

Փոփոխված	Պատճառը	Մեկնաբանություն
Արշակ - տեղամասի ուսումնասիրություն - այս տարածքում ոսկու հանքավայրերի առկայության նախնական հաստատում:	Պարզել հարավում ոսկու պաշարների ծավալը	Շարունակական հետազոտություն - այժմ ընդգրկված է ելակետային ուսումնասիրություններում

Կույտային տարրալվացման հարթակ	Սևանա լիճը՝ անմիջական ազդեցության գոտի	Վերանայել Կույտային տարրալվացման հարթակի տարբերակների վերլուծությունը – ընտրվել է տեղամաս 26-ը
Դատարկ ապարների պահեստ	Նախագծման կատարելագործում	Ադսորբցիոն-դեսորբցիոն վերականգնման հանգույցի (ԱԴՎ - ARD) ներուժի վերաբերյալ շարունակական ուսումնասիրությունների հիման վրա պատվիրվել են հետագա ուսումնասիրություններ խորհրդատուների միջոցով GRA
Հանքի ենթակառուցվածքը	Գտնվելու վայրերի բարելավում. տեխնիկական սպասարկում, անվտանգության պահանջներ՝ բեռնափոխադրման ճանապարհների փոսերը և դատարկ ապարների լցակույտը (ԴԱԼ) և ջարդիչ սարքավորումը	Կենսաբազմազանության ուսումնասիրությունների արդյունքները և ազդեցությունը P. porphyrantha-ի վրա (բեռնափոխադրման ճանապարհներին)՝ գեոտեխնիկական նկատառումներով - ջարդիչ կայան: Ադսորբցիոն-դեսորբցիոն վերականգնման հանգույցի (ԱԴՎ -ARD) կառավարում – ԴԱԼ-ի նախագծում

Փոխակրիչներ	Վերգետնյա փոխակրիչի օգտագործումը երկարացվում է ջարդիչ կայանից – փոխակրիչը Գնդեվազի համայնքային բնակավայրի սահմանի արևելյան եզրին է, բեռնատար ավտոմեքենաներով փոխադրվող աղբը նետելու վայրը՝ ԿՏՀ տանող ճանապարհի վերջին 2-3 կմ:	Գնդեվազ համայնքի նկատմամբ զգայունության բարձրացում
Կույտային տարրալվացման հարթակ ԿՏՀ	Գտնվում է Արփա գետից դեպի արևելք, ստորին տարածքում, սակայն հովիտը բնութագրող բերրի գյուղատնտեսական հողերի վրա:	Մշակաբույսերի տեսականի (ցորեն, եգիպտացորեն, լոբի), ընդարձակ ծիրանի այգիների հետ միասին: Հողի օտարումը և կենսամիջոցների վերականգնումը ևս կրիտիկական նշանակության հարցեր են
Վերականգնողական միջոցառումների պլանավորում	Ընթացքի մեջ է	Ընդհանուր առմամբ դրական արձագանքներ 2013թ.-ի տարեկան մշտադիտարկման արդյունքներից:

Հանքի ընդհանուր պլանը ԸՍԼՕ-ի 9-րդ տարբերակի համար


Համայնքի հետ խորհրդակցություն		
Ծրագրի համայնքային կենտրոն	Ընթացքի մեջ է	
Համայնքի զարգացում	Ծրագրի զարգացման գործողությունների պլանը պետք է որոշվի և իրականացվի	Ծիրանի չորացման գործարան, կրթական օբյեկտ և խաղահրապարակ, կանաչապատում և ծառատունկ
Զբոսաշրջություն	Ամուլսարի ստորին լանջերում լեռնադահուկային հանգստավայրի ստեղծման ներուժ - մերժվել է	Դադարեցվել է

Թափոնների կառավարում	Հայտնաբերվել է, որ Կեչուտի աղբավայրը վատ է հագեցված թափոնների հեռացման համար, աղբավայրի կառավարման բարելավումներ՝ կանաչապատմանը զուգահեռ:	Ընթացիկ քննարկումներ - արդյոք հանքավայրում ճամբար կլինի տեղակայված, թե դա կլինի Ջերմուկում գտնվող հյուրանոց(-ներ)-ում - քննարկումները շարունակվում են
ԲՍ կառավարման համակարգ	Lydian-ի բնապահպանական և սոցիալական հարցերով զբաղվող թիմը այժմ լավ զարգացած է՝ թիմն ունի հստակ կառուցվածք: Ինչպես նաև մամուլի թիմը՝ լրատվամիջոցների հետ կապի համար:	Թիմի ղեկավարը հաճախակի փոխվում էր, կար անձնակազմի արտահոսք, սակայն մշակվել էր հստակ ուղղություն և ռազմավարություն:
Սևանա լիճ		

«Սևանա լճի մասին» օրենքը	Հանքի և ենթակառուցվածքների բոլոր բաղադրիչներն այժմ ներառված են նախագծման մեջ:	Lydian-ը աշխատում է Կառավարության հետ՝ ապահովելու համապատասխանությունը օրենքի պահանջներին:

7.2 ԲՍԱԳ-ի թարմացման հանդեպ կիրառվող մոտեցումը

Կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները, և դրանք կարևոր են ԾՀԱՄ-ի կողմից ստուգման համատեքստում, ստորև նշվածներից յուրաքանչյուրը հասանելի է ծրագրի տվյալների կենտրոնում.

Կենսաբազմազանություն	Հետագա ելակետային ուսումնասիրությունները 2014/15 թվականների գարնանը և ամռանը - փոխհատուցում - Ջերմուկի ազգային պարկ - գաղափարը այժմ ավելի մանրամասն քննարկման փուլում է: Որոշվեց, որ Արշակը, հավանաբար, կառանձնացվի՝ կրիտիկական նշանակության կենսամիջավայրի վրա ազդեցության պատճառով: P. porphyrantha – հետազոտության մեջ այժմ առաջընթաց կա բույսերի նմուշների պահպանման հետ կապված, որոնք այլապես կոչնչացվեին հանքի շահագործման արդյունքում - Հայաստանում և Մեծ Բրիտանիայում մշակվել են տեղափոխման և բազմացման տեխնիկաներ: Տեսախցիկներ են տեղադրվել՝ կրիտիկական նշանակության կենսամիջավայրի (մասնավորապես՝ ասիական արջերի պոպուլյացիաների) մասին ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով և սահմանելու այն պահանջները, որոնց հիման վրա ծրագիրը հրաժարվելու է որոշ տեղանքների օգտագործումից: Հետազոտական աշխատանքներն ընդլայնվել են՝ տարածվելով նաև երկարացված փոխակրիչի և ԿՏՀ-ի վրա:
Ջրային ռեսուրսներ	Ջրային բալանսը տեղանքի ամբողջ տարածքում - Որոտանի և Ջերմուկի օդերևութաբանական կայանի պատմական տվյալների օգտագործման հետ մեկտեղ - փակ օղակի նախագծում, բացառությամբ շինարարության (ջրառի համար), շահագործման չորրորդ տարվանից հետո (արտահոսք դեպի Արփա): Ադսորբցիոն-դեսորբցիոն վերականգնման հանգույցի (ԱԴՎ - ARD) հետագա ուսումնասիրություններ, ներառյալ հետազոտական ծրագրից հասանելի նմուշների դաշտային փորձարկում:
Սեյսմիկություն	Ուսումնասիրությունն ընդլայնվել է՝ տարածվելով ԿՏՀ-ի վրա
Հողօգտագործում	ԿՏՀ-ի տեղակայումը ավելի ինտենսիվ գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքում - հողերի օտարման վրա այժմ ազդում են արդեն համաձայնեցված, բայց ծրագրի մաս չհամարվող հողերը (14-րդ տեղամասի ներսում), ինչպես նաև տեղամաս 26-ի հողօգտագործողներն ու փոխակրիչի երթուղու միջանցքը: Արշակն առանձնացվել է, և ներառվել է փոխհատուցում՝ կենսամիջոցների վերականգնման մասով:

Տրանսպորտ	Դեպի հանքավայր մուտքն այժմ բացառապես H42-ի երկայնքով է - անցած Գնդեվազ համայնքը, որտեղից հնարավոր է մուտք գործել արևմուտքից դեպի հանքային ենթակառուցվածքներ - երթևեկության առաջին մանրամասն ուսումնասիրությունները և ճանապարհի օգտագործման վրա ազդեցությունների ուսումնասիրությունը - շինարարություն և շահագործում:
Առողջություն, ապահովություն և անվտանգություն	Ցիանիդի կառավարում - ամենակարևոր խնդիրը, ԿՏՀ-ի մերձավորությունը Գնդեվազի նկատմամբ: Հանքի աշխատողների ներհոսքը (շինարարություն և շահագործում) - չի լուծվել
Մշակութային ժառանգություն	Ելակետային պայմաններն ընդլայնվել են՝ տարածվելով նոր ենթակառուցվածքների վրա

Լանդշաֆտի և վիզուալ ազդեցության գնահատում (LVIA)	LUC խորհրդատվական ընկերությունը նշանակվել է՝ գնահատելու ազդեցությունը հանքի նախագծման, նախագծման փուլերի պլանավորման և բարձրության վրա:
Կլիմայի փոփոխություն	ERM-ը նշանակվել է և հաշվարկել ածխածնային բալանսը

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան	Մինչ օրս ձեռնարկված պաշտոնական հրապարակումներ. 2013թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Երևանում տեղի են ունեցել աշխատանքային խմբի մի շարք հանդիպումներ՝ քննարկելու ԿՏՀ-ի հնարավոր տեղակայումները 2014 և 2015 թվականներին տեղի բնակիչների և ֆոկուս խմբերի հետ տեղեկատվական հանդիպումներ՝ Գնդեվազում հողերի օտարման գործընթացը, հովիվների և կենսաբազմազանության վերաբերյալ ուսումնասիրությունները բացատրելու նպատակով: 2014թ.-ի հուլիսին Կառավարությանը ներկայացված՝ Հանքարդյունաբերության թույլտվության հայտի շրջանակներում ՇՄԱԳ-ի հաստատման գործընթացի նպատակներով անցկացվել է երկու հանրային լսում, առաջինը՝ Գնդեվազում, օգոստոսի 25-ին, իսկ երկրորդը՝ Գորայքում, սեպտեմբերի 27-ին: Geoteam-ը Շրջակա միջավայրի նախարարությունից վերջնական դրական կարծիքը ստացել է 2014 թվականի հոկտեմբերի 17-ին, ԲՍԱԳ-ի 9-րդ տարբերակի հանրայնացմանը նախորդող հանդիպում՝ 2014թ. հոկտեմբերի 30-ին Երևանում, որտեղ լավ էին ներկայացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ): ԲՍԱԳ-ի 9-րդ տարբերակի հանրայնացման հանդիպումներ Ջերմուկում, Գնդեվազում, Սարավանում, Գորյակում և Երևանում 2015թ.-ի հունիսին և հուլիսին:
Ստանձնած պարտավորությունների գրանցամատյան	Ստանձնած պարտավորությունների գրանցամատյանն ընդլայնվել է և ունի հրապարակման բաղադրիչ - ամբողջական և մանրամասն Համապատասխանության ստուգում (CR), ինչպես նաև նախագծման չափանիշներ – չի հանրայնացվել:

7.3 Հաստատում և հանրայնացում (2015)

2014թ.-ի հուլիսին Շրջակա միջավայրի նախարարությունը հաստատեց Տարբերակ 9-ին կցված պլանները, և հաջորդ տարի տեղի ունեցան հանրայնացման նպատակով հանդիպումներ, ինչպես փաստագրված է 2015թ.-ի օգոստոսի հանրային տեղեկատվության զեկույցում: Այնուամենայնիվ, մի քանի խնդիրներ մնացին չլուծված, և դրանք կարևորվեցին ծախսերի և ինժեներիայի օպտիմալացման զեկույցում, ինչպես նաև ՄՖԿ-ի, ՎՀԵԲ-ի և IESC- ի կողմից ԲՍԱԳ-ի արտաքին ստուգման ընթացքում, 2015թ. խորհրդակցություններից հետո:

8 ԲՍԱԳ-Ի 10-ՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԸ

8.1 Վերանախագծման չափանիշները

Ծրագրի վերանախագծումը ավարտվել է 2015թ.-ին և կարևորագույն փոփոխությունները սահմանվել և գնահատվել են 2015թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում ՄՖԿ-ի և ՎՁԵԲ-ի կողմից տեղանքի տարեկան ստուգման ժամանակ: Այս վերանախագծումը վերջինն էր, և դրա տվյալները ներառվեցին ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակում, որը և հրապարակեց ՎՁԵԲ-ը:



Հանքի ընդհանուր պլանը ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակի համար

8.2 ԲՍԱԳ-ի թարմացման հանդեպ կիրառվող մոտեցումը

ԲՍԱԳ-ի վերջնական տարբերակի պատրաստման ժամանակ կատարվել են հետևյալ ուսումնասիրությունները և դրանք ներառվել են ծրագրի տվյալների կենտրոնում.

Կենսաբազմազանություն	Սահմանվել են զուտ կորուստից խուսափելու նպատակով միջոցառումները. 1. Փոխհատուցում - Ջերմուկի ազգային պարկ - հայեցակարգը սահմանված է և համաձայնեցված - Կառավարության հետ համաձայնեցված են կառավարման և զարգացման համար ֆինանսական պահանջները - ՎՁԵԲ-ը ներգրավված է քննարկումներին 2. Արշակ - առանձնացվել է - տարածքը սահմանված և համաձայնեցված է, գծագրված է հանքի պլանի վրա (Տիգրանես Արտավազդես բացահանքից դեպի հարավ): 3. P. porphyrantha - հանքավայրի և բեռնափոխադրման ճանապարհների տարածքում հավաքվել են նմուշներ, և դրանք հեռացվել և տարվել են Սևանա լճի տնկարան կամ տեղափոխվել այլ վայր որպես վերականգնողական ծրագրի մի մաս: Լրացուցիչ գործողություններ. Հասանելի են տեղադրված տեսախցիկի տվյալները՝ Գործունեության նկատմամբ պահանջ 6-ի և գործունեության ստանդարտ 6-ի համար տեղեկություն տրամադրելու նպատակով: Ծրագրի ընդլայնված տարածքը ներառող՝ հետագա ուսումնասիրություններ:
Ջրային ռեսուրսներ	Ջրային բալանսը տեղանքի ամբողջ տարածքում– կատարելագործվել է: Ջրի պասիվ մաքրման օգտագործում՝ զուգորդված ջրի կառավարման համապարփակ համակարգի հետ ԿՏՀ-ի ներսում՝ ԴԱԼ-ից ջրի մաքրումը, ճանապարհի մակերևույթի ջրահեռացումը և ԿՏՀ-ից արտանետումը համատեղելու նպատակով Ադսորբցիոն-դեսորբցիոն վերականգնման հանգույցի (ԱԴՎ - ARD) վերլուծությունը տեղեկություններ կտրամադրի ջրի մաքրման մանրամասն նախագծման համար - ուսումնասիրությունները շարունակվում են:

Հողօգտագործում	Վերջնական տեսքով հրատարակվել է Հողի օտարման և վերաբնակեցման պլանը և հողատերերի հետ բանակցությունները շարունակվում են:

Առողջություն, ապահովություն և անվտանգություն	Լուծել ԲՍԱԳ-ի 9-րդ տարբերակի խորհրդակցության ընթացքում բարձրացված խնդիրները
Աշխատողների տեղավորման վերաբերյալ ուսումնասիրություն	InterSocial ընկերությունը նշանակվել է՝ անցկացնելու անկախ ուսումնասիրություն և գնահատելու *Աշխատողների տեղավորման գործընթացների և ստանդարտների* վերաբերյալ ՄՖԿ-ի ուղեցույցին համապատասխանությունը: Ընդունվել է հիբրիդային լուծում՝ օգտագործել Ջերմուկում ընտրված հյուրանոցները՝ զուգահեռ ստեղծելով հանքավայրում տեղակայման հնարավորություններ:
Մշակութային ժառանգություն	Ելակետային պայմաններն ընդլայնվել են՝ տարածվելով նոր ենթակառուցվածքների վրա
Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան	Մինչ օրս պաշտոնական հրապարակումներ. 2015թ.-ի դեկտեմբերի 17-ին Գնդեվազում ՇՄԱԳ-ի հանրային լսումներ և ԲՍԱԳ-ի մասին տեղեկատվական հանդիպում՝ տեղեկացնելու բոլոր տեղական շահագրգիռ կողմերին ՇՄԱԳ-ի և ԲՍԱԳ-ի պատրաստումը վերսկսելու մասին: ՇՄԱԳ-ի հանրային հանդիպումները, որոնք տեղի են ունեցել Գորայքում 2016թ.-ի փետրվարի 1-ին, Գնդեվազում՝ 2016թ. մարտի 3-ին և Սարավանում՝ 2016թ.-ի ապրիլի 21-ին: 2016թ. մայիսի 31-ին Ջերմուկում և 2016թ. հունիսի 1-ին և 2-ին Երևանում անցկացվել են ԲՍԱԳ-ի հանրային հանդիպումները:
Ստանձնած պարտավորությունների գրանցամատյան	Ստանձնած պարտավորությունների գրանցամատյանն ընդլայնվել է և ունի հանրայնացման բաղադրիչ - ամբողջական և մանրամասն Համապատասխանության ստուգում, ինչպես նաև նախագծման չափանիշներ – մշակվել է, որպեսզի ներառի ծախսերի օպտիմալացում

9 ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄ

ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակը հրապարակվեց 2016թ.-ի հուլիսին, և ՎՋԵԲ-ը միաժամանակ հրապարակեց այդ տարբերակը՝ ի աջակցություն Տնորենների խորհուրդի կողմից Գործարքի քննարկմանը: ՎՋԵԲ-ի կողմից հրապարակմանը նախորդող շրջանում, դրա ընթացքում և դրանից հետո ձեռնարկված խորհրդատվական միջոցառումները մանրամասն ներկայացվել են Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում, ինչը հաստատում է, որ Դիմումի մեջ բարձրացված յուրաքանչյուր հարց նախկինում քննարկվել է Դիմումատուների հետ, և որ ԲՍԱԳ-ի համապատասխան բաժիններում հատուկ հղում է արվել

շահագրգիռ կողմերի կարծիքներին:
Ինչպես երևում է վերը նշված ժամանակագրությունից, Դիմումատուների կողմից բարձրացված յուրաքանչյուր խնդիր բազմակողմանիորեն գնահատվել է, անցկացվել են խորհրդատվություններ և անկախ ստուգումներ՝ ապահովելու, որ ծրագիրը կազմվի այն կերպ, որ համապատասխանի Գործունեության նկատմամբ պահանջներին:

10 ԿՈՆԿՐԵՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԲՈՂՈՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱՆԵՐԻՆ

10.1 Ամփոփում

Ինչպես նշված է Ղեկավարության այս պատասխանի նախորդ բաժիններում, թե՛ Ընկերությունը և թե՛ ՎՁԵԲ-ը 10+ տարիների ընթացքում զգալի ռեսուրսներ են ներդրել՝ կազմելու ծրագիրն այնպես, որպեսզի այն համապատասխանի Գործունեության նկատմամբ պահանջներին: Դիմումի մեջ բարձրացված յուրաքանչյուր խնդիր մանրամասն գնահատվել է և նախկինում քննարկվել է Դիմումատուների հետ, ինչպես նկարագրված է ստորև: Յուրաքանչյուր խնդրի մանրամասն վերլուծությունը տրամադրվել է ԾՀԱՄ գրասենյակին՝ ստուգման համար: Հաջորդ բաժինները հերթով անդրադառնում են խնդիրներից յուրաքանչյուրին:

10.2 Գործունեության նկատմամբ պահանջ 1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում

Դիմումատուների դիրքորոշումը. Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկի 5 բնակավայրերի ջրի, օդի, հողի, վայրի բնության, համայնքի առողջության և կենսամիջոցների վրա:

Ղեկավարության պատասխանը. Ինչպես երևում է վերը նշված ժամանակագրությունից և ՎՁԵԲ-ի ներգրավվածությունից, այս խնդիրներից յուրաքանչյուրը բազմակողմանիորեն գնահատվել և զեկուցվել է Ամուլսարի ԲՍԱԳ-ի յուրաքանչյուր տարբերակում: Ծրագրի շահագրգիռ կողմերի համար հանրայնացվել են կամ այլ կերպ տրամադրվել են հիմնավորող տեխնիկական փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ այդ խնդիրներից յուրաքանչյուրը գնահատվել է, և անհրաժեշտության դեպքում մշակվել են ազդեցությունների մեղմման միջոցառումներ՝ Գործունեության նկատմամբ պահանջ 1-ին համապատասխանելու նպատակով: Ավելին, ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակի հանրայնացումից հետո ընկերությունը փորձագետների անկախ հանձնաժողով է հրավիրել, որպեսզի այն հանրությանը ներկայացնի ծրագրի վերաբեյալ անկողմնակալ կարծիք, որի մասին հաշվետվությունը նույնպես տրամադրվել է: Հանքարդյունաբերության բնույթից ելնելով՝ ծրագրի տեղանքի ազդեցությունն անխուսափելի է, այնուամենայնիվ,

ազդեցությունների մեղմման միջոցառումները և, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցման պլանները մշակվել են Գործունեության նկատմամբ պահանջների համաձայն:

10.3 Գործունեության նկատմամբ պահանջ 3.
Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն

Դիմումատուների դիրքորոշումը. Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրն առաջացրել է օդի աղտոտում փոշով և ազդել ջրամատակարարման վրա, ինչը նպաստել է խմելու և ոռոգման ջրի, ինչպես նաև Գնդեվազի ձկնաբուծարանների աղտոտմանը:

Ղեկավարության պատասխանը. ՎՁԵԲ-ը հասկանում է, որ բողոքի այս բաղադրիչը վերաբերում է շինարարական աշխատանքներին, և որ մի քանի բողոքներ ուղղակիորեն ներկայացվել են ընկերությանը: ՎՁԵԲ-ը մանրակրկիտ վերահսկել է ծրագրի շինարարության փուլը՝ հանքարդյունաբերական ոլորտի համապատասխան որակավորում ունեցող միջազգայնորեն ճանաչված խորհրդատվական ընկերության (վարկատուի՝ ԲՍ հարցերով խորհրդատու) աջակցությամբ: Վարկատուի՝ ԲՍ հարցերով խորհրդատուն հաստատեց, որ ազդեցությունների մեղմման միջոցառումները մշակվել են Միջազգային լավագույն փորձին համապատասխան: Հավասարապես, ՎՁԵԲ-ը և վարկատուի՝ ԲՍ հարցերով խորհրդատուն վերանայեցին Բողոքարկման մեխանիզմը՝ ապահովելու, որ շինարարական գործունեության հետ կապված ցանկացած բողոք պատշաճ կերպով, արդյունավետ և ժամանակին լուծում ստանա: Այնուամենայնիվ, ՎՁԵԲ-ը տեղյակ է, որ շինարարության ընթացքում բողոքներ են եղել ջրի և ջրագործության վրա փոշու ազդեցությունների մասին, և ՎՁԵԲ-ը պահանջել էր, որ հաճախորդը լուծի այդ խնդիրները՝ ծրագրի համար մշակված կառավարման պլանների համաձայն, և որ յուրաքանչյուր բողոք համարժեք լուծում ստանա: Հաճախորդը վերականգնել է ջրամատակարարման օբյեկտը, որը հայտնի է որպես Գնդեվազի ջրանցք, և ապահովել Որոտան գետից ոռոգման ջրի մատակարարումը դեպի Գնդեվազ, ինչը կոմպենսացրել է ԿՏՀ-ի կառուցման ընթացքում ոռոգման ջրի մատակարարման խափանումը (և սահմանվել որպես ազդեցությունների մեղմման միջոցառում): Հարկ է նշել, որ շինարարության փուլում շինարարական գործողություններից արտանետում չի եղել դեպի Որոտան, Դարբ և Արփա գետեր կամ վտակներ: Շինարարության ընթացքում շարունակվում էր ստորերկրյա և մակերևութային ջրերի մոնիտորինգը, և տվյալները տրամադրվել են ստուգման համար, այդ թվում՝ վարկատուի՝ ԲՍ հարցերով խորհրդատուին:

10.4 Գործունեության նկատմամբ պահանջ 4. Առողջապահություն և անվտանգություն

Դիմումատուների դիրքորոշումը. Դիմումատուները պնդում են, որ ուրանի առկայության հետևանքով աղտոտումը և ծրագրի վայրից արտանետվող փոշին կարող են ազդել բնակիչների առողջության վրա:

Ղեկավարության պատասխանը. Ճիշտ է, խորհրդային շրջանում Ամուլսար լեռան վրա ուրանի վերաբերյալ որոշ հետազատություններ են արվել, սակայն ուրանի պաշարի առկայությունը հաշվի չի առնվել ծրագրի նախնական փուլում, նախքան ԲՍԱԳ-ի 7-րդ տարբերակը, և այդ մասին հրապարակվել է Փորձագետի զեկույցում (2012թ.-ի հունվար): Դա կարելի է ապացուցել սկզբնական հետազոտությունների ընթացքում ուրանի որոնման դադարեցման փաստով, իսկ ավելի ուշ՝ Lydian-ի ծրագրի ինժեներների, խորհրդատուների և իրավասու մարմինների կողմից հետազոտույունների դադարեցման փաստով: Այս հարցի վերաբերյալ մի շարք հաշվետվություններ են պատրաստվել, և Ղեկավարությունը կարող է հաստատել, որ ուրանի հավանական առկայությունը և տեղական համայնքների վրա ազդեցությունը վճռականորեն հաշվի չի առնվել: Ղեկավարությունը հրավիրում է ցանկացած շահագրգիռ կողմի՝ ուսումնասիրելու այն նյութերը, որոնք պատրաստվել են 2012 թվականից ի վեր և որոնց վերաբերյալ լայնածավալ խորհրդատվություն է իրականացվել:

10.4.1 Գործունեության նկատմամբ պահանջ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում

Դիմումատուների դիրքորոշումը. Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը, հավանաբար, ազդել է Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ-IUCN) կարմիրգրքյան տեսակների և Բեռնի կոնվենցիայով պաշտպանվող տեսակների վրա:

Ղեկավարության պատասխանը. ԲՍԱԳ-ի նախապատրաստման ընթացքում հստակեցվել են կենսաբազմազանության առաջնահերթ առանձնահատկությունները և կրիտիկական նշանակության միջավայրը ըստ Գործունեության նկատմամբ պահանջ 6-ի: Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել՝ ապահովելու զրոյական զուտ կորուստներ ՎՁԵԲ-ի՝ Գործունեության նկատմամբ պահանջ 6-ի՝ ազդեցությունների մեղմման հիերարխիային համահունչ, ինչպես շեշտել ենք Ղեկավարության այս պատասխանի նախորդ բաժիններում: Ի լրումն 2012-2016թթ.-ի ընթացքում իրականացված ելակետային ուսումնասիրությունների և դրանց հետ կապված հետազոտությունների, շրջանակն ընդլայնվել է՝ Բնապահպանական հարցերով նշանակված գործավարի կողմից իրականացվել է լիաժամկետ վերահսկողություն, ինչպես նաև մշտադիտարկում Treweek Associated-ի և

սեփականատերերի ներգրավված խորհրդատուի կողմից: Կենսաբազմազանության գործողությունների ծրագրի և Կենսաբազմազանության կառավարման պլանների (որոնք ներառում էին փոխհատուցման ռազմավարություն) իրականացումն ընթացքի մեջ էր՝ ապահովելու Գործունեության նկատմամբ պահանջ 6-ի կատարումը, և մինչև 2019 թվականը փոխհատուցման ռազմավարությունը հաջողությամբ էր ընթանում: Ցուցարարների կողմից տեղանքի շրջափակման հետևանքով դադարեցվել է փոխհատուցման միջոցառումների իրականացումը, ինչը խաթարել է ծրագրի կողմից Գործունեության նկատմամբ պահանջ 6-ի հետ կապված պարտավորությունների իրականացման հնարավորությունը: ՎՁԵԲ-ի ղեկավարությունը հասկանում է, որ Դիմումատուների կողմից զուգահեռ բողոք է ներկայացվել Բեռնի կոնվենցիային: ՎՁԵԲ-ը վստահ է, որ Գործունեության նկատմամբ պահանջ 6-ին համապատասխանությունը կարելի է ապացուցել, և որ Բեռնի կոնվենցիայի առանձնահատկությունների հետ կապված ցանկացած խնդիր կլուծվի համապատասխան ուղիներով քարտուղարության և Հայաստանի կառավարության միջև:

10.5 Գործունեության նկատմամբ պահանջ 8. Մշակութային ժառանգություն

Դիմումատուների դիրքորոշումը. Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա՝ դրանով իսկ վնասելով քաղաքի հեղինակությանը որպես հայտնի առողջարանային կենտրոն:

Ղեկավարության պատասխանը. Ինչպես նշվեց վերևում, ճանաչվել է, որ Ջերմուկի վրա շինարարության փուլում ծրագրի հիմնական ազդեցություններն են. աշխատողների ներհոսքը և նրանց տեղավորումը: Սա լայնորեն գնահատվել է, և խորհրդատվություններ են անցկացվել ինչպես Ջերմուկում, այնպես էլ Երևանում, և Գործունեության նկատմամբ պահանջ 8-ին համապատասխանելու նպատակով սահմանվել են ազդեցության մեղմման միջոցառումներ: Ցավոք, ծրագրի շրջափակման արդյունքում ծրագրի օգուտները Ջերմուկի և հարակից համայնքների համար, ներառյալ զբաղվածության ապահովումը, մատակարարման շղթայի ստեղծումը և համայնքներում ներդրումները, դադարեցվել են: Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա հնարավոր ազդեցությունները հաշվի են առնվել ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակի բոլոր համապատասխան գլուխներում: Արդյունքում ծրագիրը կառուցվել է այնպես, որպեսզի համապատասխանի Գործունեության նկատմամբ պահանջ 8-ին, ինչպես երևում է բոլոր համապատասխան ուսումնասիրություններից և խորհրդատվությունների արձանագրություններից:

10.6 Գործունեության նկատմամբ պահանջ #10. Տեղեկությունների

հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն

Դիմումատուների դիրքորոշումը. Դիմումատուները պնդում են, որ տեղական ՇՄԱԳ գործընթացի շրջանակում իրականացվող հանրային քննարկումների ընթացքում Ջերմուկի համայնքի հետ խորհրդակցություններ չեն անցկացվել:

Ղեկավարության պատասխանը. Ծրագրի նախագծման ամբողջ ընթացքում ԲՍԱԳ-ի և ազգային ՇՄԱԳ գործընթացի համար ԲՍ ուսումնասիրությունները և արդյունքները համատեղվել են խորհրդատվությունների ընթացքում: Այս մոտեցումը համաձայնեցվել էր իրավասու մարմինների հետ և հետագայում ընդունվել էր՝ խորհրդատվության գործընթացը բարդացնելուց խուսափելու նպատակով: Բոլոր խորհրդատվությունները փաստագրված են ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակում (Գլուխ 4.20), իսկ կոնկրետ խնդիրներն ու մտահոգությունները փաստագրված են Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում (Հավելված 8.6, ԲՍԱԳ-ի 10-րդ տարբերակում, որը թարմացվել է ծրագրի շինարարական փուլում): ՎՋԵԲ-ի ԲՍ քաղաքականությունը մշակված է այնպես, որպեսզի համալրի և լրացնի ազգային ՇՄԱԳ-ի պահանջները, նաև տրամադրվել են ծրագրի տարածքում և դրա շուրջ իրականացվող՝ ծրագրի ազդակիր անձանց և համայնքների հետ լայնածավալ խորհրդակցությունների մանրամասները: Սա ներառում է շահագրգիռ կողմերի հետ բազմաթիվ հանդիպումներ Ջերմուկում, ի սկզբանե՝ ՎՋԵԲ-ի խնդրանքով: Ազգային ՇՄԱԳ գործընթացը ղեկավարվում է Հայաստանի կառավարության կողմից, և համապատասխան վարչությունն է ՇՄԱԳ գործընթացին առնչվող ցանկացած բողոքների համապատասխան հասցեատերը: Այնուամենայնիվ, ինչպես ներկայացվել է, ծրագրի ընկերությունը տասնամյակի ընթացքում անցկացրել է խորհրդատվություններ, այդ թվում՝ Ջերմուկի հինգ համայնքներում՝ Գործունեության նկատմամբ պահանջ 10-ի դրույթներին համապատասխան: